



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Weypletef

Weyne

491.99-8

S-45

1909

Ծղմ.

Ն. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

ԵՒ

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երևանի տպարանում տպագրված է

Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան Ան. Մարտիրոսյանի

1909

491.99-8  
ԱՌ-45

18 MAY 2010


APM.  
3-354a  
491.99-8  
S-45

Կ. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

911

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ




## Ա Յ Բ Բ Ե Ն Ա Ր Ա Ն

Ե Ի

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

### ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նրբագեղանկարչության սիպ



Թ Ի Յ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ ՄՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ, ՊՈՒՇԿԻՆՍԿԻ ՓՈՂՈՑ № 3.

1909

20 AUG 2013

9822

### Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Այս դասագիրքը կազմելիս՝ մենք իսկզբանէ այն կարծիքին ենք եղել, որ առաջին և երկրորդ տարուայ ուսուցման նիւթերը համապատասխան բաժանմունքներում պէտք է մի ուսուցչի ձեռքի լինեն և դա պէտք է լինի մայրենի լեզուի ուսուցիչը. մենք կարծել ենք, որ մայրենի լեզուի դասագիրքը, աւելի շատ քան մի ուրիշը, կոչուած է նիւթ մատակարարել ուսուցչին, բացի լեզուի դասերից, նաև միւս օժանդակիչ առարկաների՝ բարոյախօսութեան, իրազննութեան և վայելչագրութեան համար. մենք կարծել ենք և կարծում ենք, որ բոլոր առարկաները, նաև թւաբանութիւնն ու հայրենագիտութիւնը, միևնոյն ուսուցչի ձեռքին լինելով և աւելի կապակից ու ներդաշնակ ընթանալով մայրենի լեզուի դասերի հետ, մանուկների յիշողութեան մէջ խառնաշփոթութիւն չեն մտցնիլ, նրա գլխի մէջ, եթէ կարելի է այսպէս ասել, չեն գրաւիլ այս ու այն անկիւնը, առանց գետնալու՝ թէ որպիսի ոք է հարևան անկիւնի բնակիչը: Ահա այս է պատճառը, որ մենք աշխատել ենք ոչ միայն լեզուի ուսուցման համար բազմակողմանի վարժութիւններ տալ այս գրքի մէջ, այլ և նրան զուգընթաց տուել ենք միւս օժանդակիչ առարկաների համար բաւականաչափ նիւթեր. մենք զուգակցել ենք բարոյախօսականը իրազննականի, նկարագրականը պատմողականի, արձակը չափաբերականի հետ... Ուզում ենք հաւատալ, որ այս փոքրիկ գրքոյկը խնամքով անցնելուց յետոյ, տարուայ վերջին ամենայն ոք կը համոզուի թէ սրբան կարևորագոյն նիւթեր է ամբարել մանուկը թէկուզ հէնց միմիայն մայրենի լեզուից:—Պետական ուսումնարաններում, ուր մայրենի լեզուի ուսուցումը սկսում է արդէն գրագէտ մանուկների հետ և ուր դասատուն կարիք չունի ցուցակագրած մանրամասնութիւնների մէջ մտնել, այս գրքոյկը հայ աշակերտներին, այսուամենայնիւ, շատ ու բազմադիմի նիւթեր է տալի՝ բառագիտութեան, զրուցատրութեան, փոխադարձ թարգմանութեան և բերանացի ու գրաւոր վարժութիւնների համար:

### ՅՈՒՑՈՒՄՆԵՐ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ

**Առաջին պատկեր.**—Զրուցատրութեան ծրագիրը կազմում է ուսուցիչը, նիւթ անելով ժողովրդական առածը. «Ինչոր կասես, այն կը լսես»: Զրոյցը՝ վերջ-ի վերջոյ պիտի յանգի այն բանին, թէ ինչպէս մանուկները խաղի ժամանակ մտնում են կարախն և, զանազան բացազանչութիւններ անելուց յետոյ, կեզրոնանում են ա, օ, ու ձայների վրայ, որոնց ձայնանիշները (նշանագրերը) ուսուցիչը ցոյց է տալիս նախ շարժական տառերով և ապա գրելով:



39970-63

**II.** Զրուցատրութեան նիւթը առնելու է հետեւեալ առածից. «Բանուկ երկաթը ցոլուն կըլի. բանուկ մարդը տոկուն կըլի»:—Ահնակապ վարպետը իւր կապած ակը տանում, տալիս է դարբնին, որ երկաթից նրա համար օղ շինի... Զրոյցի ահազար... Ահնակապ վարպետ—մի բանուկ մարդ. ակը՝ արդիւնք նրա տոկունութեան. դարբին—մի ուրիշ բանուկ վարպետ, օղը՝ արդիւնք նրա տոկունութեան. նա համբերութեամբ տաքացնում է երկաթի շերտը հոտցի մէջ, վարպետութեամբ թակում կոացնում է նրան սալի վրայ և վերջ-ի վերջոյ հազցնում է ական շուրջը. օղը միշտ ցոլուն է, քանի որ բանուկ է, քանի որ գործի մէջ է. բայց հէնց որ դադարում է գործելուց, ժանգոտում, ոչնչանում է: Վերլուծանելի բառերը՝ ակ, օղ ոչ միայն պարզ են, այլ իրանց ելիւ տառով բազմաթիւ բառեր են կազմում և կարգաւ-գրելու գաղտնիքը լիովին բաց են անում մանուկները առաջ: Հարկաւոր եղածին չափ պէտք է երկար կանգնել այս վարժութիւնն անցնելիս, մանաւանդ երբ ակ և օղ բառերին աւելանում է սալ բառը: Եթէ ինքը ուսուցիչը այնքան տոկուն և եղաւ, որ կարողացաւ հմտութեամբ և համբերութեամբ անցնել այս գլուխը, ապա նա գործի տէրն է, նա հէնց սկզբից յաղթահարել է բոլոր դժուարութիւնները:

**III.** Զրուցատրութեան նիւթը առնել հետեւեալ առածից. «Կատուն մսին չըհասաւ, այսօր ուրբաթ է՝ ասաւ»: Առածի իմաստը: Մի ուրիշ առակ կատուի ու մկնիկի մասին: Կատուն—առարկան իրազննել. կատու—բառը վերլուծել. վերլուծել մուկ և ապա միս բառը: Գրութիւնը զուգընթաց:

**IV.** Ուսուցիչը պատմում և պատմել է տալիս Վազան շուն» առակը (ազան—աչքածակ, որ իր ունեցածով չի բաւականանում): Իրազննել շուն, որպէս առարկայ վերլուծել շուն» և ապա Շունը՝ որպէս առարկայի անուն: Գրութիւնը զուգընթաց:

**V.** Զրուցատրութեան նիւթը Վէշը և շունը—առակ. իրազննել էօր որպէս առարկայ (շատ համարում) և համեմատել շան հետ (համեմատելիս, զանազանութիւն) վերլուծել՝ էշ-էշը. գրութիւն:

**VI.** Մագն ու բազը (առակ). իրազննել սազը և ապա բազը (Չրային թռչուն ներ. նմանութիւն, զանազանութիւն). վերլուծել սազ, բազ, լին բառերը: Գրութիւն

**VII.** Հաւը և ցինը (առակ). իրազննել հաւը որպէս տնային և ցինը որպէս զիշատիչ թռչուն: Վերլուծել՝ հաւ և ապա ցին: Գրութիւն:

**VIII.** Կաղնի ծառը և եղէգը (առակ): Առակի բովանդակութիւնը այսուհետ համարում կցւում է դասերին: Իրազննել ծառը որպէս առարկայ (արմատ, բուն ձգներ): Վերլուծել 1, ծառ. ցոյց տալ ու և ր տառերի հնչական տարբերութիւն (առանձին ուշադրութեամբ, որովհետեւ քաղաքացի մանուկները շատ դժուարութեամբ են ընտելանում այդ հնչիւնների տարբերութեանը). 2, եղէգ. է և ր տառերի զօր ծածուկութիւնը բառի սկզբում, մէջը և վերջը:

**IX.** Ոգնին և օձը—առակ. իրազննել օձը որպէս ներկայացուցիչ սողուն ների (համարում). վերլուծել 1, օձ. համեմատել ձ և ծ տառերի հնչական նմանութիւնը. 2, ոգնի համեմատել օ և ո տառերը բառի սկզբում, միջում և վերջում:

**X.** Որբ մանուկը խաչ-քարի առաջ աղօթում է: Ո՞վ է որբը. մօրից որբ հօբից որբ, բոլորովին որբ. որբի վիճակը: Վերլուծել «խաչ» և ապա «բար». իս և ր և կ տառերը: (Ի տառի գրութիւնը տուած է XII դասի հետ):

**XI.** Եկթի կով—առակ. իրազննել կովը (որոճող կենդանի) նրա տուած օգնւմ մարդու՝ կաթ, սեր, մածուն, իւղ, պանիր: Վերլուծել՝ կով, կաթ, պանիր. և և վ տառերի գործածութիւնը (վ գործ է ածւում բառի սկզբում, իսկ ւ բառի մէջը և վերջը) ու-ից յետոյ միշտ դրւում է վ. վ—իրանից առաջ եղած ու-ի հնչիւնը՝ փոխում է օ-ի տես կրացուցիչ վարժութիւնների XVII գլուխը):

**XII.** Փիղ և քոթոթ—առակ. ուսուցիչը առակից դուրս պատմում է միքանի հետաքրքիր տեղեկութիւններ փղերի կեանքից, յիշեցնում է, թէ ինչ ահագին դեր են կատարում ժանգի ու կեցիկը:—Վերլուծել՝ փիղ և ժիլ, յետոյ ժանգի: Գրութիւն (Ի տառի գրութիւնը այս դասի հետ է):

**XIII.** Գայլը և դառը (առակ). իրազննել գայլ—առարկան. համեմատել շան հետ. վերլուծել բառս «գայլ». յ տառը որպէս կիսաձայն ի կամ որպէս ուսուցիչն ու կարգալու համար նրա վրայ դրել ենք հին-հայերէնի սուղ նշանը: Այդ նշանը կրում է նա մինչև գրքիս 9-դ մանրաշարձանը: Այդ տեղից մենք նրան փոխարինում ենք սովորական յ-ով:

Յ կիսաձայնը, երբ իրանից յետոյ մի արմատական բաղաձայն տառ ունի, իրանից առաջ եղած ու-ի հետ կարգացւում է ու յ (ուսուցիչն ԿՅ):

**XIV.** Առիւծը և մուկը—առակ. առակի իմաստն է, թէ երբէք չպէտք է արհամարհել թոյլերին, որոնք ընդունակ են անփոխարինելի ծառայութիւններ անել ուժեղներին. մուկը ազատում է գաղանները թագաւորին, որ ամբողջապէս մձըձուկ էր ցանցի մէջ, կոծոտելով ու կտրատելով ցանցի թելերը: Իրազննել առիւծը:

Այս դասի ժամանակ ուսուցիչը պիտի բացատրի, որ իւ (իվ) վանկը երբեմն կարգացւում է իու (յօ), այսինքն բաղաձայն ւ-ն դառնում է ձայնաւոր ու: Բացատրութիւնը լինելու է միայն օրինակներով. վերցնենք արծիւն և առիւծ բառերը: Առաջին բառի մէջ իւ-ից յետոյ դրած բաղաձայնը (ն) իրանը չէ, եկամուտ է, նրան կարող ենք դէն ձգել. երկրորդ բառի մէջ իւ-ից յետոյ եղած բաղաձայնը (ծ) իրանն է, եկամուտ չէ, արմատական է. նրան դէն ձգել չենք կարող: Անկասկած ամենքն էլ կ'ասեն, որ 7—8 տարեկան մանուկը այդ

առաջարկում ենք մի նոր նշանագիր, որ կազմուած է ի և ւ տառերի միացումից և որը խոշոր նկարը դնում ենք այստեղ: Հնումը, մեր այրուբնի մէջ, ւ ձայնաւոր տառ է եղած, համազօր ներկայիս ու-ին, ուսուցիչն Կ-ին կամ Ֆրանսերէն Ա-ին: Դարերի ընթացքում նա կորցրել է իւր նախնական հնչիւնը և կոշտ վ-ի դեր է յանձն առել—դարձել է սոսկ բաղաձայն: Եւ թող բաղաձայն էլ մնայ: Իսկ այն դէպքերում, ուր նա, ի տառին յետեւելով, ձայնաւոր է փոխւում և նրա հետ մի հնչիւն է կազմում, թող մանուկները զիւրութեան համար բոլորովին ընդգրկի ի-ին և, նրա հետ ձուլուելով, մի տառ դառնայ, որպէսզի հեշտ լինի զանազանել իւ վանկից:—Սկզբի համար մենք այս նոր տառը ընդունել ենք, որպէս ինքնուրոյն նշանագիր, սպասելով մեր գործող ուսուցիչների և թեմական տեսուչների կարծիքին:

**XV.** Յոպոպ. իրազննել առարկան. վերլուծել «յոպոպ». յ առանց սուղ նշանի բաղաձայն տառ է. նրա հնչական նմանութիւնը հ-ին: (Բառի սկզբումը թէև նա կարգացւում է որպէս հ, բայց նրա հնչիւնը անհամեմատ նուրբ է հ-ից, այնպէս որ շատ ղէպքերում կարող է նաև դուրս ձգուել, որովհետեւ բառը առանց դրան էլ պահում է իւր նշանակութիւնը):







# միս—ի, մ. \*

իմ, մի, միս, մաս, մատ, տամ. մուկ, կամ. մատ,  
մա-տիկ. մուկ, մու-կիկ. տատ, տա-տիկ. մօտ, մօ-տիկ.  
տամ, ա-տամ. մաղ, մա-ղիկ. տօտ, տօ-տիկ, Մի-սակ,  
Ի-սակ, Լու-սիկ.


ի մի միս մատ տամ մուկ կամ մատ  
մա-տիկ մուկ մու-կիկ տատ տա-տիկ մօտ մօ-տիկ  
տամ ա-տամ մաղ մա-ղիկ տօտ տօ-տիկ Մի-սակ  
Ի-սակ Լու-սիկ

ի մի միս մատ տամ մուկ կամ մատ  
մա-տիկ մուկ մու-կիկ տատ տա-տիկ մօտ մօ-տիկ  
տամ ա-տամ մաղ մա-ղիկ տօտ տօ-տիկ Մի-սակ  
Ի-սակ Լու-սիկ



\* Այս դասի համար տե՛ս է երկու պատկեր. ուսուցիչը այս երկրորդ պատկերի համար պատմում է կատուի ու մկների առակը: Նիւթը դնում ենք այբբենական մասի վերջում: (Տես ցուցումների. III):

# IV



# շուՆ—ը, ն. զ.

օղ, լօղ, լօշ, շօղ, շատ, մատ, շատ, սատ, տաշ,  
տաս, տաղ, մաղ, շիշ. ուշ, նուշ. սա, սան, նա.  
շու-շան, շա-մամ, ա-նուշ, մա-նուկ, մա-նու-շակ.  
Ջուշանիկ, Ջամամիկ, Անուշիկ, Մանուկ, Մանուշակ.  
Ունիմ, ունիս, ունի:—Աննան ունի անուշ շամամ:  
Լինիմ, լինիս, լինի:—Ուշ լինի, անուշ լինի:

շ օ լ լ օ շ շ ա տ մ ա տ ս ա տ տ ա շ  
տ ա ս տ ա ղ մ ա ղ շ ի շ ու շ ն ու շ ս ա ս ա ն ն ա  
շ ու շ ա ն շ ա մ ա մ ա ն ու շ մ ա ն ու կ մ ա ն ու  
Ջ ո շ ա ն ի կ Ջ ա մ ա մ ի կ Ա ն ու շ ի կ Մ ա ն ու կ  
Մ ա ն ու շ ա կ Ու ն ի մ ու ն ի ս ու ն ի  
Ա ն ն ա ն ու ն ի ան ու շ շ ա մ ա մ  
Լ ի ն ի մ լ ի ն ի ս լ ի ն ի  
Ու շ լ ի ն ի ան ու շ լ ի ն ի









X



# խաչ — խ. չ. Խ .2.

խակ, խաղ, խող, խոտ, խոց, խանկ, Խորէն  
 չար, չոր, չանկ, աչ, աչիկ, խաչ, խաչիկ, Չատի  
 կաղ, կախ. ցեղ, ցեխ. աղ, ախ. մղակ, Մեխակ

Որք աղջիկը խաչի առաջ ի՞նչ է անում:  
 Երեխին խրնձոր, խաչին մատաղ մի ասիլ:  
 Աղէսի դանչը խաղողին չըհասաւ, ասեց՝ խակ է  
 Իմացողին մին, չիմացողին հազար ու մին:

Ե խ խաչ խաչ խոց ու խաչ

Խ չ չորեկը գնաց ուսումնասիրան

Չի սաղանաց յեղբի կ'ըսէր

# քար — ք. Բ.

կար, քար. կաղ, քաղ. կող, քող. գիրկ, գիրք.  
 կանոն, քանոն. գարի, քարի. Բրիտան. Բերդ.  
 մաքի ոչխար. մատակ ձի. մարի հաւ. մէրոն խող.

## Ո Ր Բ Ը .

Կարմիր արեւը արդէն մէր մըտաւ,  
 Լուսինն էլ շատով գընաց, ծածկ-ւեցաւ:  
 Ասողերը ամեն քողի տակ մըտան  
 Եւ ցարտ ու խաւար գիշեր էր աշնան:  
 Ամեն մարդ գնաց, իր տանը հասաւ.  
 Ամեն երեխայ մօր գիրկը մըտաւ.  
 Մէնակ խեղճ որբը չանէր հէր ու մէր,  
 Չանէր բարեկամ, քարիկ կամ ընկեր.  
 Ոտքերը բոբիկ, տրկլոր ու քաղցած,  
 Օտարի դրոսն մընաց կուչ եկած:



XII





# փիղ-Փիլ — փ. ֆ. Փ. ֆ.

փափ, փակ, փոս, փափուկ, փետուր, Փրկիչ...  
 փէս—ֆէս, փլաւ—ֆիլաւ, ֆուրգոն, մաֆրաշ...

# ժանիք — ժ. ժ.

ժամ, ժիր, կռժ, ժանգ, բաժակ, բաժին, բժիշկ...




## Փիղն ա քոթոթը.

Մի անգամ քաղաքի փողոցներով ման էին ածում մի ձեռնասովոր փիղ: Մարդիկ թամաշա էին դուրս եկել: Էդ ժամին մի փղբրիկ շնիկ, որտեղից որ էր, դուրս վազեց եւ սկսեց փղի վրա հաջել:

«Ինչի՞ ես հաջում, հարցրեց նրան մեծ շունը. ուզում ես փղին վախեցնե՞ս»:

— Չէ, վախեցնել չեմ ուզում, պատասխանեց քոթոթը. հէնց էնպէս, հաջում եմ, էլի. հաջում եմ, որ տեսնողներն ասեն. տեսէք, մեր քոթոթը սրբան քաջ է, որ փղի դէմ էլ հաջում է:



## XIII. գայլ—յ.

այս, այդ, այն. այ, հայ, հայր, մայր, ծայր, այծ...  
 այսօր, այդքան, այնպէս, սայլակ, հայեիլի, եղբայր...:  
 քոյր-քայր. ծոյլ-ծայլ. թոյլ-թայլ. լոյս-լայս. բոյս-բայս.  
 Քոյրն ասեց՝ եղբայր ունի՞մ. եղբայրն ասեց՝ քոյր չունի՞մ:



Քոյրն ասեց՝ եղբայր-եղբայր, ջանն եղբայր, ջանըս  
քեզ մատնող, եղբայր. կարա եմ կարել, կարճ է  
եկել. բիւզմա եմ շարել, խոշ է եկել. ճընճողակի  
լեզուն մեղրով քեզ համար եմ տապակել:

յ. գայր, տայր, այճ, կայճ, հայր, մայր.


բայր, ճայր, բոյր, յոյր, այր. արար.

Գայլ եւ գառը.

Սարի լանջով վազում էր մի պարզ առու: Գառը  
մօտեցաւ, որ ջուր խմէ: Գայլը տեսաւ վերելից եւ  
ձայն տրւեց. էյ, դու, գառնուկ, ի՞նչու ես ջուրս  
պղտորում. այդ արարմունքիդ համար ես քեզ պիտի  
ուտեմ: Գառը ուզեց արդարանալ. բայց անօրէնը ականջ  
չարեց եւ խեղճ գառնուկին պատառոտեց ու լափեց:

Սիրուն, անմեղ իմ գառնուկ,  
Բուրդըդ սպիտակ ու փափուկ.  
Դաշտ վազելով ու արօտ  
Մօրդ քաշում ես կարօտ.  
Մի լար, գառնուկ սիրական,  
Փոքրիկ տղի դու նման,  
Կըզա մայրդ, հետը շատ  
Կըբերէ քեզ անուշ կաթ:

XIV



առիժ—ի \*

իւր, բիւր, աղբիւր, հիւր, հիւս, հիւսել, արին, հարիւր.

Առիժն ու մուկը.

Մուկը բուն էր շինել առիժի որջի մօտ եւ  
ապահով ապրում էր: Առիժին դուր չեկաւ մկան հա-  
մարձակութիւնը. նա ուզեց մկանը ջարդել: «Ինձ մի  
ջարդիր, տէր, խնդրեց մուկը. թող ապրեմ քեզ մօտ,  
ձեռքիցս եկած լաւութիւնը կ'անեմ»:

Ի՞նչ լաւութիւն արաւ մուկը առիժին:

\* Ի=10. կարգն նաև ցուցումների XIII գլուխը:

XV



# յոպոպ — յ, Յ.

հարկ, յարկ. հարթ, յարդ. համր, յամր. հետ, յետ.  
համար, յամառ. հատիկ, յատակ, յատուկ. յիսուն.  
երեխայ, քահանայ, ծառայ, փեսայ, տեսայ, եկայ,  
երեկոյ, յետոյ, յարգոյ, Յարոյ, Գարոյ.

յ յարկ, յարդ, յամառ, յայրայ.

Յ Յատուան օրհնեաց ճանուկ յնորին

# Յ ո պ ո պ ր.

Յոպոպը ձու պիտի ածէր, որ ճուտեր հանէր,  
բայց բուն շինել չգիտէր: Նա մի պատրաստ բուն  
գտաւ, ձու ածեց, որ թախս նստի: Միւ օրը յոպոպն  
զգաց, որ բունը հոտում է. գնաց, որոնեց մի ուրիշ  
բուն, նորից ձու ածեց: Զատ շանցած՝ այս բնից էլ  
սկսեց վատ հոտ գալ:

Այս տեղի թռչունները, ինչպէս երևում է, բոլորն  
էլ հոտած են, ասեց յոպոպը. թողեմ, հեռանամ,  
ուրիշ երկիրներ գնամ:

«Աստուած բարի ճանապարհ տայ, պատասխա-  
նեց ազուար. գնան, ուր ուզում ես. բայց քանի որ  
այդ կեղտասէր բնութիւնը հետըզ է, հոտն էլ ամեն  
տեղ հետըզ կըլինի:

# Փ ի ո օ ն.

Կատուն եկաւ, փիսիկ-փիսիկ,  
Հազար նազով, ինչպէս հարսիկ,  
Գունչը սրբբեց թաթիկներով,  
Մազը սանրեց շանչիկներով.  
Փիսիկ-փիսիկ էր ես տրբտում,  
Թէ՛ մկներն են այսօր արթուն:  
Կատուն ասեց՝ միած, միած.  
Այսինքն թէ՛ այն, այն:

XVI. վ. ւ.

վաղ, վախ, վազ, վիզ, վեց, վեդ, վատ, վան, վարդան...  
կով, հով, սով, ծով, օրով, տարով, բարով, քարով...  
ով—օվ, ովսան—օվսան, Ովակիմ—Օվակիմ...  
հաւ, ցաւ, նաւ, թիւ, կռիւ, հաւատ, հաւան:

Ճանճ.

Փոքրիկ ճանճ եմ գուարճասէր, միշտ թռչում եմ վայր  
ու վեր, մի հով տան մէջ, մի բազում, սաստիկ արեւի  
տաքում, կեր ու խումից, խաղից ջոկ իսկի չաւնիմ ուրիշ  
հոգ եւ, ներկայով բաւական, միտք չեմ բերում սպազան:

XVII. է. ե.

սէր—սեր. աէր—գեր. հէր—հեր. մէր—մեր. ամէն—ամեն.

Մեղու.

Գարուն, ամառ, ամեն օր, նս գնում-նմ դաշտ ու ձոր,  
աշխատում-նմ նս անվերջ, մեղր պտուռւմ ծաղկանց  
մէջ, նւ զբտածըս նս շիտակ, իսկոյն տանում նմ փե-  
թակ, որ նրբ փչէ ցուրտ քամին, ծաղիկները թառամին,  
նս ձմեռը պաշարով լինիմ իսպառ սպահով:

XVIII. եա. եօ.

հոգի—հոգեակ. որդի—որդեակ. աղաւնեակ. եօթնեակ...

Արուսեակը շատ աշխատասէր աղջիկ էր. իրանց դասատանը  
նա ունէր եօթն ընկերուհի. նրանց անուններն էին՝ Սրբուհի  
Մամիկոնեան, Սաթինիկ Արամեան, Վարդուհի Պարոնեան, Պեր-  
ճանուշ Պոռջեան, Մանուշակ Պատկանեան, Սիրանոյշ Աղայեան,  
Լուսիկ Արծրուհի: Իսկ Արուսեակի ազգանունը Ղևոնդեան էր:

XIX. ի—իւ.

Ալիւր—ալիւր. արին—արին. աղբիւր—աղբիւր. առիծ—առիւծ.

Ես շատ եմ սիրում, երբ ծիւն է գալիս, տաք հագնւում  
եմ, բազն եմ վազ տալիս, ընկերներիս հետ ճնազուստ խաղում,  
ազատ թռչկոտում, խնդում, ծիծաղում. բայց, ան, աշխարհում  
կան ըլիւր մանուկներ, որոնք բոբիկ են, չաւնին տաք շորեր:

XX. եւ—և.

Կարմիր արեւ, հազար բարեւ, այս [ո՛ւր էիւր շատ-շատ  
օրեր ամպերի տակ մտել, կորել:

Արև'-արև', եկ, եկ, գիգի քարին վեր եկ, մեր ոչխարին  
մտիկ արա՛, որ գայլը գայ, իմաց արա՛:

XXI. (, ' . : ... ' )

Տօ-տա՛ \*).

Տօ-տա՛, տօ-տա՛

Ոտիկներըդ շուտ-շուտ փոխի, բալա՛ ջան.

Տօ-տա՛, տօ-տա՛

Տօտիկներըդ ամուր կոխի, լալա՛ ջան...

Տօ-տա՛, տօ-տա՛

Արի, արի, ինձ ճիջարա, քեզ անտաղ.

Տօ-տա՛, տօ-տա՛,

Արի, մօրըդ պաշի արա, քեզ սնդաղ...

Տօ-տա՛, տօ-տա՛

Հըրէս եկաւ իմ բալիկը վագելով,

Օ'-խա՛յ, օ'-խա՛յ՝

Պաշի արաւ իմ շըրթունքը լիգելով:

\*) «Տօ-տա»-ն և «Ագուաւի լեզու»-ն (գրքիս երկր. բաժնում) պատ-  
կանում են մեր շնորհալի մանկ. գրող Յ. Աղաբաբի գրչին:

### Ամբողջ այբուբենը.

ա, բ, գ, դ, ե, զ, լ, թ, ժ, ի, յ խ, ծ, կ, հ, ճ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ու, ս, վ, ա, բ, ց, լ, փ, ք, ա, օ, ֆ. (Է, Կ.)

Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, Ի, Լ, Խ, Ծ, Կ, Հ, Ձ, Ղ, Ճ, Մ, Յ, Ն, Ը, Ո, Չ, Պ, Ջ, Ռ, Ս, Վ, Տ, Ր, Ց, Ի, Փ, Ք, Ա, Օ, Ֆ.

*Ամբողջ այբուբենը.*

*ա. բ. գ. դ. ե. զ. լ. թ. ժ. ի. յ. խ. ծ. կ. հ. ճ.*

*դ. ե. ճ. ղ. ճ. մ. յ. ն. շ. ո. չ. պ. ջ. ու. ս. վ. ա. բ. ց. լ.*

*փ. ք. ա. օ. ֆ.*

*Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ. Ժ. Ի. Լ.*

*Խ. Ծ. Կ. Հ. Ձ. Ղ. Ճ. Մ. Յ. Ն. Ը. Չ. Պ.*

*Ջ. Ռ. Ս. Վ. Տ. Ր. Ց. Ի. Փ. Ք.*

*Ա. Օ. Ֆ.*

### 1. Ա գ ա հ շ ու ն

Մի շուն կար: Մի օր այդ շանը, մի մտալի ոսկր բերանին, անց էր կենում կամարջով: Կամարջի տակից պարզ ջուր էր վազում: Շունը տեսաւ, որ մի ուրիշ շուն գնում է ջրի միջով: Սա էլ բերանին մի մեծ մտի կտոր անէր: Շունը կրանչեց ու ցած թռաւ կամարջից. ուզում էր միւս շան բերանից մտի կտորը խլել: Բայց ի՛նչ՝ ջրի միջին ոչ շան կար, ոչ միւս կենդանին խաբւել էր իր շրւարից. ազահաթիւնը զրկեց նրան իր անեցածից:

### 2. Ա դ ու է ս ը

Ադուէսը պառկեց աղբի տակին, վույ, վույ,  
Աչքը գցեց չաղ հաւի ձագին, վույ, վույ,  
Նետով կրտամ աչքի տակին, վույ, վույ,  
Որ մօտ չըզայ նա մեր բագին, վույ, վույ:

### 3. Կ ա տ ու ն ու մ կ ն ե ը ը

Կատուն սպիտակ փոշի ցանեց վրան և մտաւ տաշտը: Փոքրիկ մուկը կարծեց, թէ պանիր է, մօտ գնաց, որ կռծի: Կատուն թաթը մեկնեց, բռնեց, խեղդեց: Յետոյ մօտեցաւ մի ուրիշ մուկիկ, ապա երկրորդը, երրորդը... Կատուն ամենքին էլ խեղդատեց: Մայր-մուկը մօտ գնաց տաշտին, նայեց ալրակոլոր կատուին և ասաւ. «Ճանաչեցի՛, փուշ կենդանի, ճա-

նաչեցի՛ մլաւան կատուն ես. գոյնդ ես փոխել, հոգիդ էլի նոյնն է»։ Ասեց ու գնաց, միաներին էլ իմացրեց։

4. Կ ա տ ու ն

Կատուն մեռաւ, ափսոս ու ախ,  
Մկներն այսօր խիստ են ուրախ.  
Թէ որ յանկարծ վեր կենայ սաղ,  
Նրբանց կանի արին-շագախ։

5. Ս ա գ ն ու բ ա գ ը

Սագն ու բաղը լճի երեսին լողում էին ու խօսում։  
«Բնդիկ, ասում էր սագը. տեսնում ես՝ թէ ի՞նչ  
շնորհալի թռչուն եմ, ջրումը լողում եմ, օդումը թռչո-  
չում, գետնի վրայ էլ ման եմ գալիս. ճշմարիտն ասա՛  
ես բոլոր թռչունների թագաւորը չեմ»։

— Կասկած չկայ, որ դու շատ շնորհալի թռչուն  
ես, պատասխանեց բաղը. բայց ես էլ քեզանից պա-  
կաս չեմ, հա՛...

«Ա՛յ միամիտ թռչուններ, ասաց նրանց ազուաւր.  
Ի՞նչու էք հպարտանում. կարո՞ղ էք դուք շան պէս  
վազել, ծիծեռնակի պէս թռչել, կամ ձկան նման  
լող տալ»։

Սագն ու բաղը գլուխները կախ գցեցին։

«Հա՛, ընկերներ, շարունակեց ազուաւր. աւելի լատ  
է մի բան գիտենալ ու հիմնաւոր, քան թէ շատ բան  
ու բոլորն էլ կիսատ-պրատ»։

6. Ս ա գ ե Ր

Չու-Չու, ջու-ջու, շատակեր,  
Սև ու սպիտակ իմ սագեր,  
Հերիք, որքան լողացիք,  
Կարմիր սօտիկ լըւացիք,  
Հերիք, որչափ գետի մօտ  
Որդեր կերաք դուք տղմոտ.  
Գնանք, գնանք գէսլի տուն,  
Ձեզ կուտ կըտամ իրիկուն։

7. Բ ա գ ի կ

«Բաղիկ-բաղիկ,  
Կարմիր թաթիկ,  
Ուր ես գնում կամաց-կամաց,  
Չագուկներդ չորս կողմ առած»։  
— Ես գնում եմ ջուր գտնելու,  
Չագուկներս լըւանալու.  
Չագուկներս մաքուր-մաքուր.  
Տղոց երեսն աղտ է ու մութ։

8. Հ աւ ը և ց ի ն ը

Հաւը ձագերն առաւ ու գնաց քջուջ անելու։ Յինը  
տեսաւ նրանց և սկսեց պտոյտ-պտոյտ անել վերևնե-  
րում։ Մայրը ձայն տրւեց.

Չու-Չու, ջու-ջու, իմ ձագուկներ,  
Սիրուն վառիկ, աքլարիկներ,  
Վագէք, մտէք թևիս տակը.  
Շատ հեռու է հայր-որձակը.  
Չար ուրուրը ման է տալիս,  
Օ՛յ-օ՛յ, սնց է պտոյտ գալիս։

Չագերը հասկացան, որ վտանգ կայ, վազեցին, մտան մօր թևերի տակ: Բայց մի ձագուկ ականջ չարեց մօր ձայնին: Յինը նետի պէս ցած իջաւ, ճանկերի մէջ առաւ նրան ու տարաւ, անուշ արաւ:

### Գ. էջն ու շունը

էջն ու շունը միասին ճանապարհ էին գնում: Երկու ընկերները մի խոտաւէտ տեղ կանգնեցին, որ հանգստանան: Երկուսն էլ սոված էին: Էջն սկսեց արածել կանաչ խոտը: Չունն ուտելու բան չունէր:

«Խուրջինումդ շատ հաց կայ, մի կտոր ինձ տուր՝ ուտեմ», խնդրեց շունը:

— Չեմ տալ. հացը ուրիշների համար է. այ, թէ ուզում ես, դու էլ խոտ կեր ինձ նման:

«Ես խոտ չեմ ուտում, էջ բարեկամ, ասաց շունը. աղաչում եմ՝ մի պատառ հաց տուր»:

էջը ականջ չըզրեց շան աղաչանքին:

Այդ միջոցին թփերի ետևից դուրս եկաւ գայլը, տեսաւ շանը, կանգնեց և տխուր ձայնով օճնաց: Էջը զարնարեց. «Իմ սիրելի, իմ պատուական ընկեր, անա քեզ բոլոր հացը. կեր, անուշ արա, միայն թէ ազատիր ինձ գայլի ատամներից»:

Չունը երեսը շուռ տրւեց ու հեռացաւ: Մի ըոպէի մէջ գայլը պատառ-պատառ արաւ էջին:

## ԸՆԹԵՐՑԱՐԱՆ



### Ա. \*)

1. Դասական առարկաներ՝ գիրք, գրիչ, գրչակոթ, գրչածայր, գրչաման, գրչահատ, քարեգրիչ, քարետախտակ, գրատախտակ, կաւիճ, մատիտ, տետրակ, թանաք, թանաքաման:

2. Խաղալիք՝ վէպ, գրնդակ, հոլ, խարազան, խաղատիկին, չրւան, օղակ, չիկափայտ, շիւիկ:

3. Գիրք, մէջը քաղցր միրգ: Ինչ որ գրեցաւ գրիչով, չի հանել ըստով, բրիչով: Մատիտը մատիգ, կօշիկը ոտիգ, ճանապայ երթալիս միշտ վինին մօտիգ:

\*) Ուսուցիչը բացատրում է՝

- ա. Դաս, դասի—դասական:
- բ. Առ—առաջը, մօտը. տրիկ—գցւածը, դրւածը:
- գ. Առարկ, առարկայ—մի բան, որ դրած է մեր աչքի առաջ:
- դ. Դասական առարկայ—դասի ժամանակ հարկաւոր բան:
- ե. Խաղ, խաղալ, խաղալու—խաղալի, խաղալիք:

Հողը կ'ուզէ խարազան, որ պտոյտ գայ անխափան:  
Վէգի կարմիրն է սիրուն, վաստակ է գարկողներուն:  
Զըւան ցատկերն օգտակար շարժմանք է մանկանց համար:

4. Գ ա ս ա տ ու ն

Գասատան մէջ նստած են աշակերտները: Աշակերտների առաջ նստած է վարժապետը: Վարժապետը սովորեցնում է: Աշակերտները սովորում են: Երբ-որ վարժապետը ներս է մտնում, աշակերտները ոտի են կանգնում և աղօթում են: Աշակերտները դասատանը կարդում են, գրում են, հաշւում են թւերով, երբեմն էլ նկարում են: Աշակերտների դիմացը դրած է մի մեծ գրատախտակ: Գրատախտակի մօտ դրած է կաւիճ և սպունգ: Գրասեղանների վրայ դրած են դասական առարկաներ:

5. Գրեցէ՛ք ձեր սեռակների վրայ՝

Գրիչը դասական առարկայ է: Գնդակը խաղալիք է: Գիրքը... վէզը... մատիտը... տետրակը... չիլիկը... քանոնը... թանաքը...\*

6. Հ Ր Ա Լ Է Ր

Զանգը տըւին, դէհ, շուտ արէք,  
Խաղալիքներ մի կողմ դրէք.  
Մի կողմ դրէք գընդակ, չըւան,  
Խաղատիկին, հոլ, խարազան.  
Մըտէք, մըտէք դուք դասատուն.  
Իսկոյն կըգայ ձեր դասատու-ն:

7. Անգիր սովորեցէ՛ք այս առածները և գրեցէ՛ք՝

Ով կըկարդայ, նա մարդ ա: — Ով կ'աշխատի, նա կ'ուտի՛:  
— Ով ալարի, ոչ դալարի:

8. Բացառեցէ՛ք՝ հետեւեալ հանելուկներ՝

Ա. Գըլուխս կտրեցին, սրտիկս հանեցին, գինի խմացրին, չեղուս բացւեցաւ, խօսիլ ըսկսաւ:  
Բ. Քանի որ ծեծը կ'ուտէր, ուրախութեամբ կըպըտատէր, երբ-որ ծեծը վերջացաւ, ընկաւ գետին ու մեռաւ:

9. Մ ի ա ս ի ն լ աւ է, ջ ո կ - ջ ո կ ց աւ է.


«Վարդանիկ եղբայր, խաղանք միասին»:  
— Լաւ, արի խաղանք, Սաթինիկ անգին:  
«Ես կ'առնեմ հոլս, գընդակ, խարազան»:  
— Իսկ ես տիկնիկս, օղակ ու չըւան:

Այսպէս խօսեցին Վարդանիկն ու Սաթինիկը և միասին իջան պարտէզ՝ խաղ անելու: Սկզբում խաղը լաւ էր գնում. նրանք փոխ-առ-փոխ թռչկոտում էին չըւանով, գընդակի էին տալիս, օղակ էին գցում ու բռնում... Յետոյ Սաթինիկը գրկեց իր խաղատիկինն ու սկսեց նրա հետ պար գալ: Վարդանիկն էլ սկսեց խարազանով իր հողը պտտացնել: Մէկ էլ՝ եղբայրը գոռաց Սաթինիկի վերայ. «Հեռու կանց, ի՛նչ ես ոտիս տակն ընկնում»:

— Դու կոպիտ ես, Վարդանիկ, պատասխանեց Սաթինիկը և անցաւ պարտիզի միւս ծայրը: — Մանուկները ջոկ-ջոկ սկսեցին խաղ անել: Բայց մենակ սկսած խաղը երկար չքաշեց. միքանի բոպէից յետոյ նրանք տխուր-տրտում յետ դարձան տուն:

10. Գրեցէ՛ք և գանազանեցէ՛ք՝

Մէկ հոլ էր. մէկ վէզ էր. մէկ գիբ էր. մէկ քար էր. մէկ ծառ էր...  
Շաւ հոլեր. քար վէզեր. քար գիբեր. քար քարեր. քար ծառեր...



Բ.

11. Ի՞նչ ենք ուտում. \*) հաց, պանիր, արգանակ, սպաս, կաթնեսպաս, թանեսպաս, փլաւ, չիւրթմայ, դօրմայ, կոլուակ — քիւլթայ, գիշերեփուկ — հարխայ, կարկանդակ — պիրաժօկ, կուտապ — պիրօկ...

12. Ի՞նչ ենք խմում. ջուր, կաթ, թէյ, սուրճ, գինի, գարեջուր...

13. Հ ա գ և ջ ու ր

Մարդու գլխաւոր ուտելիքը հացն է: Հացը պատրաստում են ալիւրից: Առաջ ալիւրը մաղում են, յետոյ տաք ջրով շաղախում, խմոր են շինում: Խմորը շաղախելիս՝ հետը թրթ-խմոր են խառնում: Թրթ-խմորին ասում են խաշ: Չաղախած խմորը լաւ հոնցում են և ծածկում: Հոնցած խմորը քիչ-քիչ քացախում է տաշտի

\*) Ասուցիչը բացատրում է՝

ա. Խմոր, խմորեղէն՝ հաց, բոքոն (բոկեղ), լաւաշ, բաղարջ, կաթնահոնց, բլիթ, իւղաբլիթ, գաթայ, պաքսիմատ — սուխարի:

բ. Կաթ, կաթնեղէն՝ մածուն, սեր, կարագ, թան, շոր, իւղ, պանիր...

գ. Միս, մսեղէն՝ արգանակ — բուլիժն, սպաս — սուպ, խորաված, տոպակած...

մէջ՝ գալիս է: Տանտիկինը վերցնում է եկած խմորը, գնում է և այդ գնդերից հաց է թխում թոնրի կամ հնոցի մէջ: Հնոցին փուռն են ասում:

Ջուրը մարդիկ չեն պատրաստում. նա այնքան հարկաւոր է, որ Աստուած ինքը առատութեամբ բաշխում է հարուստին էլ, աղքատին էլ: Մարդիկ խմելու ջուրը վեր են առնում աղբիւրներից և գետերից: Ուր-որ աղբիւր կամ գետ չկայ, մարդիկ գետինը խոր քանդում են, ջրհոր են շինում և այդ ջրհորի ջուրն են խմում: Առանց ջրի մարդ չի կարող ապրել. կենդանիներն էլ կրկոտորուին, եթէ ջուր չլինի:

14. Գրեցէ՛ք ձեր սեռակների վերայ՝

Հացն ուտելիք է: Ջուրը խմելիք է: Գրելը... գնդակը... կաթը... մատիտը... պանիրը... թէյը... գաթան... գինին... խղը... հողը... քարետախտակը...

15. Սովորեցէ՛ք եւ գրեցէ՛ք հետեւեալ առածները՝

Հաց ու պանիր, կեր ու բանիր: — Աղ ու հաց, սիրտը բաց: — Մի բաժակ ջուր, ով ուզի՝ տուր: — Հացն ուտելով, բանն անելով: — Հացի կտրածը թուրը չի կտրել:

16. Բացատրեցէ՛ք հետեւեալ հանելուկները՝

Ա. Ճերմակ տակառիկ, մէջն երկու կերպ ըմպելիք:  
Բ. Օրան-օրան շառ է գալիս, ոտներ չունի, ման է գալիս, բերան չունի, կուլ է տալիս:

17. Ա ն ձ ր և

Անձրև - անձրև, ցած արի,  
Բըսցաւր ցորեն ու գարի,



Բըսցուր ծաղիկ, կանաչ խոտ,  
Աւլէ փոշի, մաքրէ օդ.  
Անձրև՝-անձրև, ցած արի,  
Գալըզ ամենիս բարի:

### 18. Երկու աքաղաղ

Երկու աքաղաղ կուեցին և մէկը միւսին զօռ  
արաւ: Յաղթուողը, արին-լայ, փախաւ, թագ կա-  
ցաւ, իսկ յաղթողը հպարտացաւ, թևերը թափե-  
թափ տրւեց և ծուղրուդու կանչեց:

Արծըւին դուր չեկաւ աքլարի գոռոզութիւնը, նետի  
պէս վրայ տրւեց երկնքից, ճանկերի մէջ առաւ նրան  
ու տարաւ, անուշ արաւ:

19. Մէկ արծիւ էր. մէկ մասիս էր. մէկ սեռակ էր. մէկ սեռակ էր:  
Շաս արծիւներ, աս մասիսներ. աս սեռակներ. աս սեռակներ:

### 20. Աքաղաղ

Դու ինձ ասան, աքաղաղ,  
Ոսկէ կատարիդ մատաղ,  
Կարմիր միրուքիդ մատաղ,  
Ինչի՞ ես շուտ արթնանում,  
Բարձր-բարձր երգ ասում,  
Քաղցր քունս խանգարում:


Ոստուցիչը բացատրում է՝

1. Ալիւր=ալիւր. աղբիւր=աղբիւր. իդ=իւզ. միւս=միւս.  
ձին=ձին. արին=արին. ի=իւ:

Կանոն՝ իւ երբ իրանից յետոյ բաղաձայն տառ ունի, կար-  
գացում է որպէս իու (ոռսերէն Ю):

2. Պատին=պատիւր, ազնիւն=ազնիւր, կռին=կռիւր,  
թիւն=թիւր, արծիւն=արծիւր:

Կանոն՝ բաղաձայն ն-ից առաջ իւ կարդացում իվ, եթէ  
այդ ն դրած է ը ձայնաւորի տեղ:



### Գ. \*)

21. Շինութիւններ՝ տուն, խրճիթ, գոմ, ջաղաց, դպրոց,  
պալատ, եկեղեցի...

22. Կտօքեր եւ նաւեր՝ սայլ, սայլակ, սահնակ, կտօք,  
շոգեկտօք, հանրակտօք. ձիաքարշ, էլէքտրաքարշ. շոգենաւ,  
առագաստանաւ, նաւակ, մակոյիկ...

23. Հաննիւրակ՝ Չորս եղբայր են շատ նման, չորսն էլ շար-  
ժուն, զրնացկան. փոքրերն առաջ գուզընթաց գլորում են սրտա-  
բաց. իսկ մեծերը բարկանում, յեաքից վազում, չեն հասնում:

### 24. Մեր տունը

Մեր տունը մեծ չէ. նա երեք սենեակ ունի և  
մի խոհանոց: Սենեակներից մէկում մենք զաս ենք  
սովորում. երկրորդ սենեակում ճաշում ենք. նրա մէջ  
դարսած են շատ աթոռներ, մի մեծ սեղան և մի  
պահարան: Ամենից մեծ սենեակում մենք քնում ենք:  
Դա կոչում է ննջարան:

\*) Ոստուցիչը բացատրում է՝

ա. Շէն, շինել, շինած, շէնք, շինութիւն:

բ. Շոգի-նաւ, շոգենաւ. շոգի-կտօք, շոգեկտօք:

գ. Սահ, սահիլ, սահուն, սահնակ—սայլակ առանց անիւների:

դ. Քաշ—քարշ, քաշել—քարշել, ձիաքարշ, էլէքտրաքարշ—քարշակ:

Մեր տան բակը շատ մեծ է: Բակի աջ կողմը փոքրիկ պարտեզ կայ. իսկ ձախ կողմը շինած է գոմբ: Բակումն է լինում մեր տան հաւատարիմ պահապանը՝ շունը:

25. Տունը շինութիւն է: Սահնակը... տետրակը... ֆայտօնը... լաւաշը... սայլակը... պալատը... գրչամանը... գարեջուրը... ֆուրգօնը... ուսումնարանը... կաթը... կաթնահոսանցը...

### 26. Մ ա ն ու շ ա կ

Կապոյտ գլխով, կանաչ ոտով  
Ես ծաղիկ եմ անուշ հոտով.  
Թէև տունկըս փոքրիկ է, ցած,  
Արօտներում միշտ թագ կացած,  
Բայց իմ փունջըս ամենի տան՝  
Թէ աղքատի, թէ մեծատան,  
Իբրև գարնան առաջին զարդ,  
Կարէ տեսնել ամեն մի մարդ.  
Ես եմ սիրուն գարնան գուշակ.  
Իմ անունըս է մանուշակ:

### 27. Կ ա տ ու ի խ ր ա տ ր

Որաի շունը մի նապաստակ էր բռնել: Կատուն տեսաւ և ասաց. «Ի՛նչ անզաթն ես, մեղք է, բայց թող»:

Այդ միջոցին մի փոքրիկ մուկը անցաւ նրանց մօտից: Կատուն վրայ վազեց, բռնեց և խեղդեց:

«Այդ ի՛նչ արիւր, ասաց շունը. մեղք գործեցիր, ընկեր»:

— Ոչինչ, պատասխանեց կատուն. իմ խեղդածը մի չնչին մուկն էր միայն:

28. Մէկ շուն էր. տուն էր. բուն էր. թուր էր. ջուր էր. սուր էր...  
Շատ շներ. տներ. բներ. թրեր. ջրեր. սրեր...


### 29. Ն ա պ ա ս տ ա կ

Մի վագիր այդչափ արագ,  
Ի՛մ սիրունիկ նապաստակ,  
Շատ պըստիկ ես տակաւին,  
Թաթիկներդ կըյոգնին:

Քեզ կըբերեմ կաթն ու հաց,  
Շաքրեջրով համեմած,  
Ուտես, խմես, գորանաս,  
Բանից կարօտ չըմնաս:

Ծանր-ծանր կըքայլես,  
Սիրտըս վեր-վեր կըհանես.  
Կ'արձակեմ քեզ, երբ ուզես,  
Կ'երթաս, ազատ կ'արածես:





Պ. \*)

30. Գործիք՝ գգալ, դանակ, պատառաքաղ, թուր, դուր, հրացան, մանգաղ, քորոց, արօր...

31. Սարք՝ կապ, սանձ, երասան, թամբ (թամբ), փորքաշ, ասպանդակ, խամութ...

32. Հանելուկներ՝ Տապանը փայտ է, մեռելն երկաթ է, երբ որ ձայն կըտայ, աշխարհ կըթնդայ:

Բ. Փթած փայտը փորեցին, առիւծը մէջը թաղեցին:

33. Մ ե Ր ը ն տ ա ն ի ք ը

Ես մի փոքրիկ երեխայ եմ: Ես ունիմ հայր ու մայր: Հայրս ու մայրս ինձ շատ են սիրում: Ես երկու քոյր և մի եղբայր էլ ունիմ: Ծնողքս նրանց էլ են շատ սիրում: Հայրս ու մայրս մեզ կերակրում

\*) Աւանդիչը բացատրում է՝

ա. Գործ, գործել, գործող, գործի—գործիք:

բ. Երկիր, երկրագործ, երկրագործի—երկրագործական:

գ. Երկրագործական գործիք՝ գութան, արօր, ցաքան, եղան, մանգաղ, գերանդի...

դ. Դերձակի գործիք՝ ասեղ, քորոց, մկրատ, մատնոց, արդուկ...

ե. Դարբնի գործիք՝ մուրճ, սալ, ունելիք, կտան...

զ. Հիւանի գործիք՝ ուրագ, կացին, սրոց, դուր...

են: Նրանք մեզ պահում-պահպանում են: Մենք շատ ենք սիրում մեր ծնողներին և նրանց պատւէրները կատարում ենք:

34. Դանակը գործիք է, իսկ սանձը... Սայլը կառք է, իսկ արօրը... Կաթը խմելիք է, իսկ մածուանը... Թամբը սարք է, իսկ մանգաղը... Կացինը գործիք է, իսկ փորքաշը... մկրատը... մուրճը... սուրճը... երասանը...

35. Ա լ ե ը

(Հաւելի մէկից մինչեւ տասը)

Լորենու տակին մէկ ուլ կար կանգնած, Մենակ մընացած՝ մըկ-կում էր կամաց.

Այդ ձայնի վըրայ մօտ վաղեց միւսը.

Մէկ ուլի տեղակ եղան երկուսը

Մի ուրիշ ուլիկ երբ նրանց տեսաւ, Կարծեց՝ կուում են, մօտ վաղեց, եկաւ.

Այս մէկի գալով ուլերի թիւը

Երեքի հասաւ:—Ճիշտ է հաշիւը:

Մի չորրորդ ուլիկ, գարմանք էր կ'ասես,

Որտեղից որ էր, պուպուզ, լոյս ընկաւ.

«Ի՞նչ էք երեքով պըռըշկել այդպէս.

Երեքը լաւ չէ. չորս լինինք»—ասաւ:

Մանրիկ այծուկներ, չորս չարածճի,

Պօզ-պօզի տըւին, առան մէկ-մէկի.

Թփերի տակից նըրանց չխկոցին

Մինն էլ դուրս վաղեց. հինգ եղան կարգին:

Նա որ կենտու էր, նայեց դէպի վեր

Եւ ժայռի գլխին տեսաւ մի ընկեր.

Այս հօ վեց եղան:— Բա այն խայտոտը...

Նրանով եօթ կանի ուլերի հօտը:

Մինն էլ, աես, ինչպէս թըփի մէջ գաղաուկ,  
 Արագ կռծում է ոստերը փափուկ.  
 Սա էլ որ մօտ դայ ուլերի հօտին,  
 Բոլորի թիւը կը հասնի ու թիւն:

Իսկ այն ի՞նչ ուլ է միւս կողմը կանգնած,  
 Որք տըղի նըման, կարծես, խըռոված.  
 Արի նըրան էլ հաշւի մէջ առնենք,  
 Առաջ ութ էին.— իննը թամամենք:

Ահա գալիս է և սէիզ էծը,  
 Երկար մօրուքով, ամենից մեծը.  
 Նա հպարտ-հպարտ ուլերն ականեց.  
 «Ինն են ձագերս, ինձնով տասն», ասեց:

Սէիզ ապէրը գէպի տուն գընաց,  
 Բոլոր ուլերը իւր ետէն արած:

36. Մի գառ, մի գառը, մի գառն, մի գառն էր. շատ գառներ:  
 Մի նուս...  
 Մի ձեռ...  
 Մի դուս...

37. Համբերութիւնը կեանք է.

I. Քոյր ու եղբայր այգի գնացին: Եղբայրը խակ պտուղներ էր ուտում: «Մի ուտիր, Պետօ, ասում էր քոյրը. վնաս կը տայ, մի ուտիր»:

Պետրոսն ականջ չարեց, խակ պտուղներ կերաւ, հիւանդացաւ: Քոյրը նրան անանուխի կաթիլներ խմացրեց, մանանեխ շաղախեց, փորին դրեց և ցուն անցկացաւ:

II. Մի օր էլ նրանք հանգը գնացին: Եղբայրը

վաղ-վղեց, թըռչ-կոտաց, քրտնեց և մօտեցաւ աղբիւրին, որ սառը ջուր խմէ: «Մի խմիր, ասաց Մարիամը, թնղ քրտինքդ ցամաքի, յետոյ կը խմես»:

Եղբայրն ականջ չարեց. սառը ջուրը խմեց, մըրսեց և սկսեց զոզացնել: Բժիշկն եկաւ և Պետրոսի համար դառը դեղ գրեց:

III. Չմեռնաղէմ Պետրոսն ու Մարիամը գնացին գետի ափը ման գալու: Գետը ծածկել էր բարակ սառուցով: «Մարօ, ես ուզում եմ սառուցի վրայ սղղամ, խաղամ»:— 2է, Պետօ, մի սղղար. սառուցը բարակ է, կը կոտորուի, ջուրը կ'ընկնես», ասաց Մարիամը: Պետրոսը էլի ականջ չդրեց քրոջ խրատին և թռաւ— սղղաց սառուցի վրայ: Յանկարծ սառուցը կոտորեց և մեր անհամբեր մանուկը ջրի մէջն ընկաւ ու խեղդեց:





Լևոնը փուռեց շէմքի վրայ. «Վա՛յ, նա՛նի, վա՛յ, օգնեցէք, ազատեցէք, քաջքերը բռնել են ինձ»:

Դրացիք լսեցին Լևոնի ձայնը, եկան, բարձրացրին կիսակենդան տղային: Յետոյ ինքը Լևոնն էլ շատ ամաչեց, երբ նրան հասկացրին, թէ ինչ դատարկ բաներից է վախեցել:

45. Գրեցէ՛ք եւ գանազանցէ՛ք՝

Մի վախկոս տղայ,	մի ծեր քահանայ.	մի լաւ մատանի...
Շատ վախկոտ տղայք.	շատ ծեր քահանայք.	շատ լաւ մատանիք...
Շատ վախկոս տղաներ.	շատ ծեր քահանաներ.	շատ լաւ մատանիներ...

### 46. Ա գ ո ա լ ի լ ե գ ու ն .

Թ'ևին տըւեց ագոաւը, եկաւ, նստեց մեր ծառին՝  
 Ղոսք, ղոսք, ղոսք...  
 Դառն ու տըգեղ նրա ձայնը գուշակիչ է միշտ չարին՝  
 Կրակ, կրակ, կրակ...  
 Ցատքեց նա ցած, ծառի տակ, ոստոստում է, կոկըռում՝  
 Ղօն, ղօն, ղօն...  
 Գընդակ դիպչի բզիզ տակ, քանի գոռաս անկշտում.  
 Չօն, չօն, չօն...  
 Թոաւ, նորից ծառն ելաւ, կրկնեց իրան կռաւոցը՝  
 Ղաւ, ղաւ, ղաւ...  
 Էս տեսակ էլ վայրի հաւ. հէնց կըբանայ կտուցը՝  
 Ցաւ, ցաւ, ցաւ...

47. Եմ, ես, է. ենք, էք, են. մարդ եմ, թռչուն եմ...  
 էի, էիր, էր. էինք, էիք, էին. մարդ էի, թռչուն էի...  
 Կամ, կաս, կայ. կանք, կաք, կան. մարդիկ կան...  
 Կայի, կայիր, կար. կայինք, կայիք, կային. մարդիկ կային...  
 Լինիմ, լինիս, լինի, լինինք, լինիք, լինին. աշակերտ լինիմ...  
 Լինէի, լինէիր, լինէր. լինէինք, լինէիք, լինէին. բարի լինէին...

Զ. \*)



48. Չորքոտանի կենդանիներ՝ ձի, կով, ոչխար, գայլ, արջ, շուն, կատու, փիղ, առիւծ, վագր...

49. Թռչուններ՝ հաւ, հնդկահաւ, սագ, ծիծեռնակ, սոխակ, արտուտ, սարեակ, ցին, բու, արծիւ, սիրամարգ...

50. Առածներ՝ Շան հետ ընկերացիր, փայտը ձեռիցդ մի գցիր:—Գայլի անունն է կոտրած, աղէսը աշխարհ քանդեց:—Կատուն մսին չըհասաւ, այսօր ուրբաթ է, ասաւ:

51. Հանելուկ՝ Մէկ շէնք գիտեմ բարձր ու շարժուն, ներքեն ունի չորս հատ հաստ սիւն, մի դուռ փոքրիկ, չնեղ, դալարուն, վրան շքեղ մի վերնատուն:

### 52. Ա դ լ է ս ն ու ճ ա գ ա ը ը

Մի անգամ աղւէսը մօտենում է ճագարի որջին և ասում է. «Ճագար, ինչի՞ ես խոր փոսի մէջ մտել. դուրս արի այդ վուրթ ծակից, արածիր պայծառ արևի տակ»:

—Շնորհակալ եմ, պատասխանում է ճագարը. երբ-որ այդ-

\*) Ուսուցիչը բացատրում է՝

ա. Տուն, տան, տանու.—ընտանի. ընտանի կենդանի՝ ձի, կով, ոչխար, շուն, կատու...  
 բ. Վայր—գուրս տեղ, վայրի—գրսի. վայրենի կենդանի՝ գայլ, եղնիկ, արջ, աղուէս...  
 գ. Խոտ, կեր, խոտակեր. խոտակեր կենդանի՝ ոչխար, փիղ...  
 դ. Միս, կեր, մսակեր. մսակեր կենդանի՝ կատու, առիւծ...  
 ե. Չորս—չորք, չորքոտանի. չորքոտանի կենդանի՝ այծ, խոզ...

տեղից կըհեռանաս, խրատդ կըլսեմ ու դուրս կըգամ: Բայց քանի որ այդտեղ ես, հանգիստ կընստեմ բնիս մէջ. քո բարեկամութիւնից ես միշտ փախչում եմ:

53. Ձին և կովը ընտանի, չորքոտանի, խոտակեր կենդանիներ են, իսկ գայլը և արջը... առիւծը և վագրը վայրենի, չորքոտանի, մսակեր կենդանիներ են, իսկ շունը և կատուն... Սագը և բադը ընտանի թռչուններ են, իսկ արծիւն ու բազէն... Ծիծեռնակն ու սոխակը վայրենի թռչուններ են, իսկ հաւը և հնդկահաւը...

### 54. Պ ա ու ա լ ն ու ա յ ծ ր

Մի խղճուկ պառաւ կար շատ հին ժամանակ. նրա նիստ ու կացը պատմեմ, իմանաք. Պատմեմ, պատսեմ, պատմեմ, իմանաք:

Պառաւը աղքատ էր, կով, գոմէշ չունէր. Դիփ եղած-չեղածը մի այծ, մի տուն էր. Մի այծ, մի այծ, մի այծ, մի տուն էր:

Տունն էլ մի ծակուռ էր, գետնի մէջ փորած. Ինքը մի խեղճ կընիկ, կորած-մոլորած. Կորած, կորած, կորած-մոլորած:

Այծը նա պահպանեց ամբողջ ձըմեռը. Մօտիկցաւ գարունը, թեթևցաւ բեռը. Ի՞նչ լաւ, ի՞նչ լաւ, թեթևցաւ բեռը:

«Այժմ արօտ կ'երթանք, մագմըզոտ ընկեր. կ'ուտես կանաչ խոտը, թարմիկ, կաթնաբեր. Թարսիկ, թարսիկ, թարմիկ, կաթնաբեր:

Դու ինձ կաթ կըբերես, կըհոգամ տունըս, կըծածկեմ մարդկանցից իմ խեղճութիւնըս. « Հա-հա, հա-հա, իմ խեղճութիւնըս »:

Այսպէս խօսեց տատը մի լաւ առաւօտ, կաթնատու այծիկը դուրս տարաւ արօտ: Արախ-ուրախ դուրս տարաւ արօտ:

Բայց խեղճ կընոջ բախտից քամի վերկացաւ, Ձիւն, բուք ու փոթորիկ չորս կողմ բարձրացաւ. Վայ-վայ, վայ-վայ, չորս կողմ բարձրացաւ:

Պառաւը մոլորեց, այծը կորցրեց. Գայլը նըրան ձանկեց, փորը լքցրեց. Կերակ, լափեց, փորը լքցրեց:

Մեծ նանը տուն դարձաւ արցունքն աչերին, Այծից, կաթից զրկած այն ցուրտ օրերին. Ախ-վայ, ախ-վայ, այն ցուրտ օրերին:

### 55. Ա ր տ ու տ ր

Արտուտը բուն էր շինել մի հասկալի արտի մէջ և ձագեր էր հանել: Մի օր մայրը ասում է իւր ձագերին. «Երբ այս արտի տէրը արտը տեսնելու կըգայ, դուք ականջ դրէք, թէ ինչ կըխօսի և լսածներդ ինձ պատմեցէք»:

Առաջին անգամ ձագերն ականջ են դնում և պատմում են, որ արտի տէրը եկաւ որդու հետ, մի հասկ տրորեց ափի մէջ, նայեց հատիկներին և ասաց. «Որդի, արտը հասնելուն մօտ է. Ղնա, խօսիւր մեր դրացիներին, թող գան, արտը միասին հընձենք»: Մայրը պատասխանում է. «Անհոգ կացէք, ձագերս, քանի որ արտի տէրը յոյսը դրացիների վրայ է դրել, արտը շուտով չի հընձիլ»:

Երկրորդ անգամ ձագերը պատմում են. «Արտի տէրը եկաւ, արտին նայեց և ասաց. դրացիները չեկան, գնա, որդի, մեր բարեկամներին հրաւիրիր, որ գան մեզ օգնեն, արտը միասին հնձենք»:

Խելօք մայրը պատասխանում է. «Հանգիստ կարող ենք ապրել մեր տեղը. արտը շուտով չի հրնձել»:

Երրորդ անգամ ձագերը պատմում են, թէ արտի տէրը որդուն ասաց. «Բարեկամներին ու դրացիներին սպասելը իզուր անցաւ. վաղը վերցրու մանգաղդ և եկ, արտը հնձենք ես և դու»:

Մայրը պատասխանում է. «Այժմ հաւատում եմ, որ արտը պիտի հրնձի. ուրեմն անցնենք-գնանք ուրիշ տեղ»:

56. Հացը ամենահարկաւոր ուտելիքն է:

Հացի կտրածը թուրը չի կարել:


Աչքդ ուրիշի հացին մի գցիլ:

Հացը հացարարին տուր, մի բան էլ աւելի:

◆ Հացից—ջրից զրկւած մարդուն պէտք է անենք մենք օգնութիւն:

Հացով առատ լինի սեղանդ, ջրով—անդ ու անդաստանդ՝

Այսպէս փոփոխեցէք պառաւը, այծը, գայլը, արտը, հասկը՝



Է.

57. Ձկներ \*)՝ կարմրախայտ, իշխան, տառեխ, գեղարքունի, կողակ, օրագուլ, կապուտ (լօքօ)...

58. Սողուններ՝ մողէս, օձ, գորտ, կրիայ:

59. Միջատներ՝ ճանճ, մեղրաճանճ—մեղու, մրջիւն, մորեխ, մոծակ, բզէզ, շերամ...

60. Հանելուկ՝ Քարը քարի վրայ, քար չի արածում է, տաւար չի. ձու է ածում, հաւ չի:

### 61. Ճանճերն ու մեղուն

Ճանճերը գոհ չէին իրանց կացած տեղից. նրանք խորհարդ արին, որ ուրիշ երկիր գնան: Բայց մենակ չէին ուզում գնալ. իրանցից մէկին ուղարկեցին մեղուի մօտ, որ նա էլ գայ:

\*) Ուսուցիչը բացատրում է՝

ա. Խայտ—բիծ. կարմրախայտ—մանրաձուկը կարմիր բծերով. գեղ—գեղեցկութիւն. արքայ—թագաւոր. արքունի—թագաւորական. գեղարքունի—Գեղամայ լճի ձուկը, անուշ, կաթնահամ, արքավայել. իշխան—նոյն լճի ամենախոշոր ձուկը, միտը կարմրաւուն. տառեխ—Վանայ լճի մանրաձուկը:

բ. Սող, սողալ, սողուն—սողացող, փորը գետնին քսելով ման եկող կենդանի:

գ. Հատ—կտոր, մէջ-հատ, միջատ—մանրիկ կենդանիներ, որոնց մարմինը մէջէ-մէջ կտրատւած է միքանի մասերի:



«Մեղու եղբայր, ասաց ճանճը. չար մարդիկ մեզ դադար չեն տալիս. հերիք չէ, որ ամեն բան ծածկում են մեզանից, պատուհաններում էլ թոյն են դնում, որ ուտենք ու մեռնենք: Խրճիթներում մեզ չեն նեղացնում մարդիկ. բայց այնտեղ էլ ուրիշ թշնամի ունինք՝ սարդերը ձգում են իրանց ոստայնները, մեր ոտները մճճում են, մեզ խեղդում, մեր արիւնը ծծում: Արի, մեղու եղբայր, գնանք, հեռանանք այս տեղից»:

Մեղուն լսեց և պատասխանեց. «Դուք գնացէք, ուր որ կամենում էք. ես ձեր ընկերը չեմ. ինձ համար այստեղ էլ շատ լաւ է. ամենքը պատում են ինձ ու սիրում. ես էլ ամենքին օգուտ եմ տալիս. իմ մեղրը թէ չար և թէ բարի մարդու, թէ հարուստի և թէ աղքատի ճաշակը քաղցրացնում է. իմ տըւած մոմը Աստուծու տաճարն է լուսաւորում: Դուք գնացէք, ուր որ կամենում էք. միայն գիտենաք, որ ամեն տեղ էլ ձեզ կը հալածեն, որովհետև ոչ ոքի օգուտ չէք տալիս. բացի օգուտ չըտալը, ճանճրացնում էլ էք»:

62. Օձը և մողէսը սողուններ են, իսկ շերամը և մեղուն... Օրագուլը և կապուտը ձկներ են, իսկ մրջիւնը և մորեխը... Կարմրախայտը և գեղարքունին... Մոծակը և ճանճը... Շունը և կատուն... Գայլը և աղւէսը... Սիրամարգը և հաւը...

### 63. Մ ե ղ ու ն ե ը

Գարունն սկըսեց. արեգակը հալեցրեց զաշտերի ձիւնը. հին՝ դեղնած խոտերի մօտ դուրս եկան կանաչ խոտի բողբոջներ. ծառերի կոկոնները բացւեցին և փոքրիկ տերեւներ առաջ բերին:

Ահա մեղուն էլ զարթեց ձմեռային քնից, սրբեց աչերը՝ բրդոտ թաթիկներով, զարթեցրեց ընկերներին և միասին դուրս

նայեցին լուսամուտից, որ տեսնեն, թէ ձիւնը, սառուցը և հիւսիսային ցուրտ քամին անցել են:

Մեղուները տեսնում են, որ արեգակը փայլում է, որ ամեն տեղ տաք է և լոյս. նրանք դուրս են գալիս փեթակից և թռչում են դէպի ծիրանի ծառը:

«Սիրուն ծիրանի, մի բան չունիս խեղճ մեղուներիս համար. մենք երկար ժամանակ քաղցած ենք»:

—Ո՛չ, պատասխանում է ծիրանի ծառը. դուք շատ շուտ էք դուրս եկել. իմ ծաղիկներս դեռ պահւած են կոկոններիս մէջ: Գնացէք, նշենուն հարցրէք:

Մեղուները թռան, գնացին նշենու մօտ. «Սիրելի նշենի, արդեօք մի բան չունիս սոված մեղուներիս համար»:

—Վաղը եկէք, սիրելիք, պատասխանում է նրանց նշենին. այսօր ինձ վրայ ո՛չ մի բացւած ծաղիկ չկայ. իսկ երբ բացւին, ես մեծ ուրախութեամբ կընդունեմ ձեզ:

Թռան մեղուները կակաչի մօտ, նայեցին նրա փայլուն գլխին. բայց նա էլ ո՛չ հոտ ունէր և ո՛չ մեղր:

Մեղուները տրտում և քաղցած կամենում էին յետ գնալ տուն, բայց տեսան թփի տակ մանուշակի մուգ-կապոյտ ծաղիկը: Սա բաց արաւ մեղուների համար իր կոկոնները, որոնք վիքն էին անուշ հոտով և քաղցր հիւթով: Կերան-խմեցին մեղունները և ուրախ գըւարթ յետ դարձան տուն:

### 64. Մ ե ղ ու

Հա, ծագեցաւ արեգակը,  
Հա, ծաղկեցաւ մանուշակը,  
Մեղուն թողեց իր փեթակը,  
Տըզարզալով-տըզարզալով:

Մեղուն թըռաւ ծաղկէ ծաղիկ,  
Մեղր առաւ քաղցր-անուշիկ,

Մոմը տարաւ հոտոտ, լուսիկ,  
Պըզպըզալով-պըզպըզալով:

Անուշ մեղրը՝ մանր տղոց,  
Դեղին մոմը՝ ամեն սրբոց.  
Իսկ չարերին կըճ ու խայթոց,  
Կըսկըծալով-կըսկըծալով:

65. Ես գրում եմ, դու գրում ես, նա գրում է իր դասը:  
Մենք գրում ենք, դուք գրում էք. նրանք գրում են իրանց...  
Կարդում եմ, կարդում ենք, զարմանում եմ, զարմանում ենք...



Ը.

66. Ծառեր՝ ինձորենի—ինձորի, տանձի, ըն-  
կազենի, թթենի, ծիրանի, նշենի, սօսի, եղենի՝  
կաղնի...

67. Թփեր՝ թզենի, խաղողի, վարդենի՝  
մորենի...

68. Խոտաբոյսեր՝ սէզ (կանաչ խոտ), անանուխ,  
ուհնան, համեմ, կոտեմ, սամիթ, թրթնջուկ, ծնեբեկ...

69. Բանջարանոցի բոյսեր՝ կաղամբ, բողկ, ճակըն-  
դեզ, լոբի, սիսեռ, պատրիշան, վարունգ—խիար, ձմե-  
րուկ, սեխ...

70. Հացաբոյսեր՝ ցորեն, հաճար, գարի, վարսակ,  
բրինձ, կորեկ...

71. Ծաղիկներ՝ մանուշակ, նարգէս, շուշան, կակաչ...

72. Առածներ՝ Պողոտու ծառը գլուխը կախ կըսպահի—  
Քանց պուտը կարմիր չկայ, որ ճղես՝ սիրտը սև է:—Մի ծաղ-  
կով գարունք չի լինի:

73. Հանելուկներ՝ է նա կանաչ կոճակ կոլոր, քաղցր  
հիւթով լցած տկճոր. կարմիր մեղուք ներսը բոլոր. սրդեակ,  
դու կեր իբր մեղրի ծոր:—Ոսկէ կճուճիկ, միջուկն անու-  
շիկ:—Բռնեմ ափովս, շաղ տամ թաթովըս, մեռնի տարով,  
ապրի բարով:

74. Ծիրանի ծառ, բար մի տալ,  
Ճղներըդ իրար մի տալ,  
Ամեն մօտովդ անցնելիս՝  
Ցաւերըս իրար մի տալ:


75. Մեր դրոանը խընկի ծառ,  
Նախշուն բլբուլ վրէն թառ.  
Երթար ու գար, շորոր տար,  
Սիրուն տըղիս օրօր տար:

76. Խնձորենին պողոտու ծառ է, իսկ նշենին... Վարդը  
ծաղիկ է, իսկ վարդենին... Լորը թուչուն է, իսկ լորենին...  
Յասմիկը ծաղիկ է, իսկ գարին... Յորենը հացաբոյս է, իսկ  
առույտը... Թրթընջուկը խոտաբոյս է, իսկ կաղամբը... Բողկը  
բանջարանոցի բոյս է, իսկ հաճարը... Կակաչը ծաղիկ է, իսկ  
ուհնանը... սեխը... սոխը... ձմերուկը...



### 77. Յորեն եւ գարի

Գիւղացին երկու օրավար հող ունէր: Մի օրավարում նա ցորեն ցանեց, միւսում գարի: Արտերն աճեցին, բարձրացան, հասկեր գցեցին: Մի օր գարին սկսեց խօսել. «Յորեն եղբայր, ասաց նա. վատ տեղ է ցանել մեզ մեր տէրը. այս գիւղը շատ աղքատիկ է՝ ո՛չ ոսկի ունի, ո՛չ արծաթ. ո՞վ պէտք է մեր յարգը ճանաչէ, մեզ գին տայ. արի՛, ցորեն եղբայր, թողենք, հեռանանք այս գիւղից. արի՛ գնանք այնտեղ, ուր ոսկի շատ կայ»:



Յորենը լսեց դրացու խօսքերը և ասաց. «Շատ ափսոսում եմ, գարի եղբայր, որ միայն քրտարդ ես երկարացրել, իսկ խելքդ կարճ է մնացել. ինչի՞ մենք ման գանք ոսկու ետևից. մեր արժէքն այնքան մեծ է, որ ոսկին իրան-իրան մեր դուռը կըգայ»:

78. Ես ցանեցի, դու ցանեցիր, նա ցանեց ցորեն և գարի: Մենք ցանեցինք, դուք ցանեցիք, նրանք ցանեցին... Աճեցի... աճեցինք... ճանաչեցի... ճանաչեցինք... Գնացի... գնացինք... լսեցի... լսեցինք... ասացի... ասացինք...

### 79. Նուրին

Սաստիկ շոգ ամառ էր. երկնքի երեսին ամպի կտոր չէր երևում. երկիրը քարի պէս պնդացել էր:

Առուները ցամաքել էին. աղբիւրների ջուրը պակասել էր, խոտերը դեղնել էին, արտերը թառամել:

Երկրագործը դուրս էր եկել դաշտը, տխուր նայում էր իր ցանքերին և ասում. «Աստուած ջան, ինչ որ կարող էի, արեցի. հողը բաւական խոր ցելեցի, ընտիր սերմով սերսեցի և ժամանակին ցաքեցի. մնացածը Քո սուրբ կամօքիցն է կախած»:

Միւս կողմը գիւղի պառուսները ժողովել էին մանր տղաներին, գոյն-գոյն հալաւներով զարդարել էին իրանց ձեռքով շինած խաղատիկինը՝ Նուրին, տւել էին նրանց, և պատւիրել, որ գնան, տընէ-տուն մանգան, փող-մող հաւաքեն, բերեն, մատաղ անեն, որ Աստուծու աչքը քաղցրանայ, երկինքը բացւի, անձրև գայ:

Գնում են մանրիկ տղաները, ման են գալիս տընէ-տուն, ամեն դռան կանգնում են և երգում.

Նուրին-Նուրին եկել է,  
Նախշուն Հուրին եկել է,  
Շիլայ շապիկ հագել է,  
Կարմիր գօտիկ կապել է:

Եղ բերէք, վարսը քսենք.  
Ջուր բերէք, գլխին ածենք.  
Մեր Նուրինի փայլ տըւէք,  
Ուտենք, խմենք, քէֆ անենք:



Տան-տիկիկները դուրս են բերում մի փարչ ջուր, ածում են Նուրինի գլխին, տալիս են մանուկներին՝ որը սև փող, որը իւղ, որը բրինձ. նրանք էլ տանում, պառուսներին են տալիս:

80. Ճ օ լ ի

Գարուն էր, չխոնաւ, անձրևոտ գարուն. երկինքը լաց էր լինում. անձրևը մաղում էր մի օր, երկու օր, երեք օր, մի շաբաթ, երկու շաբաթ... տները կաթում էին. ցամաք տեղ չկար ոչ տանը, ոչ դռանը...

Գիւղացին նայում էր երկնքին. շարժում էր գլուխը և ասում. «Գարնանավարս մնաց, ի՞նչ անեմ. եղանակ չկայ, օր չկայ. եթէ մի շաբաթ էլ անձրև գայ, թոռ ու թաց անի, տունս իստակ կըքանդւի... Ա՛յ կնիկ, վեր կաց, գնա՛, պառաւններին ժողովիր, «Ճօլին» ման-ածիլ սուէք, փող-մող հաւաքեցէք, մատաղ արէք, գուցէ Աստուծու աչքը քաղցրանայ, երկինքը պարզի, անձրևը դադարի:

Հաւաքւում են պառաւները, գոյն-գոյն լաթերով զարդարում են «Ճօլին», տալիս են մանուկների ձեռքը և ուղարկում են տները:

Գնում են մանուկները, ման են գալի դռնէ-դուռ, կտուրէ-կտուր և երգում են՝

Ճօլի-Ճօլի, ճօլ չըկայ,  
Խաւիժ անեմ, եղ չըկայ,  
Ճօլին ընկել է ծովը,  
Ծովիցը հանող չըկայ:  
Զըւան բերէք, դուրս հանենք,  
Թո՛կ բերէք, կցան անենք,  
Զու բերէք, թաթին դնենք,  
Ե՛ղ բերէք, վարսին քսենք:  
Խոփը պատումն է ժանգոտել:  
Զևիչը տափումն է ժանգոտել.  
Կանանչ դաշտերին ենք կարօտ,  
Կարմիր արևին ենք կարօտ:

Տան-տիկինները դուրս են բերում՝ սրը սև փող, սրը իւզ, ձու, կաթ, բրինձ. սրանք էլ տանում, պառաւներին են տալիս: Փողով ոչխար են առնում, մատուռի դռանը մորթում, տնէ-տուն բաժանում. մնացած բաներիցն էլ կերակուր են պատրաստում, հէնց անձրևի տակ սուփրայ գցում, ուտում և Աստուած կանչում, որ անձրևը դադարի:

81. Ե՞րբ է լինում \*)

Զիւնը հալւում է, խոտը կանաչում, ծառերը ծաղկում, օրը երկարում:—Այս երբ է լինում:

Զգալի կերպով շոգը սաստկացաւ. օրը երկարեց, խոտը հընձւեցաւ. արտերը հասած, մանգաղ են կանչում:—Ասացէք, տեսնեմ, այս երբ է լինում:

Մարդիկ դուրս եկան, այգին քաղեցին. օրը կարճացաւ, հունձը վերջացաւ. բարակ անձրևը բարձրից է թափւում և մութ գիշերը չորս կողմդ բռնում:—Ասացէք, ինչդեմ, այս երբ է լինում:

Դաշտ ու ձոր, տեսէք, ձիւնով ծածկւեցին. ծառերից սառցէ շիթեր կախւեցին. մարդիկ ներս մտան իրանց տները, իսկ զազանները—իրանց բները. դուրսը—օ՛յ, օ՛յ, օ՛յ,—քամի է փչում և ձիւնի փոշին աչքերդ լցնում:—Գրեցէք, ինչդեմ, այս երբ է լինում:

\*) Սովորեցնել օրուայ մասերը, շաբաթուայ օրերը և տարուայ ամիսներն ու եղանակները:

82. Տ ա ն ձ ե ր

(Հաշտեցէք տասնից մինչեւ մէկը)

Երեկ պապիս հետ այգի գնացինք  
Եւ տանձի ծառի տակին կանգնեցինք.  
Այդ տանձի ծառին տա ս ր հատ տանձ կար.  
Տասը հատ տանձից մի հատն էր ճիւղաւոռ:  
Քամին օրօրեց, ընկաւ այդ մի ն ը.  
Մինը որ ընկաւ, մընաց տեղն ի ն ն ը:

Իննը հատ տանձեր, խոշոր, հիւթալի,  
Ոստերի վըրայ դեղնին են տալի:  
Պապիս խնդրեցի, որ մէկը ինձ տայ.  
Որ մէկը ինձ տայ, ու թ ը կըմնայ:

Երբ ուտում էի պապիս տըւածը՝  
«Որդիս հիւանդ է—դուք, ձեր Աստուածը—  
Մի հատ ինձ տըւէք», ասաւ մի պառաւ:  
Ե օ թ ը հատ մընաց, երբ նա էլ առաւ:

—«Քեզ թոյլ եմ տալիս բոլորը քաղես,  
Առանց զրկանքի արդար բաժանես»,  
Ասաց պապիկս:— Ես կողովն առայ,  
Կատախ պէս ճարպիկ ծառն ի վեր ելայ,  
Զգոյշ քաղեցի եօթը հատ տանձը  
Եւ ցած սողացի՝ ձեռքիս այդ գանձը:

«Տես, պապիկ, ասի, էս մինը տատին.  
Թող ներող լինի քըչին ու շատին.  
Նա է տան մեծը:  
Մնում է վ ե ց ը:

Մինն էլ, իհարկէ, հայրիկիս կըտամ.  
Հ ի ն գ ը կըմնայ կողովում թամամ:

Բն իմ մայրիկը,  
Հոգոյս հատիկը.

Ամենից լաւը, մեծը, հասածը  
Ես նրան կըտամ,—սրտիս ուզածը:

Է՛հ, չ ո ր ս ը մընաց... կնց, քիչ միտք անեմ.  
Զէ դու ասացիր, որ արդար բաժնեմ.  
Սուրէնն ու Շուշան թող մինն ստանան,  
Երկու կէս անեն, ուտեն լիանան.  
Նրանք փոքրեր են, կէս-կէս էլ լաւ է.  
Խաչ-որ, պապի ջան, նրանց այդ բաւ է:

Մնացած ե ր ե ք տանձերիցը մին  
Ես պէտք է հանեմ պահողին բաժին՝  
Մեր այգեպանին,  
Ծերուկ Օհանին:  
Ի՞նչ մընաց տակը,  
Հաշիւը շիտակը:

Երկու հատ մընաց կողովի տակին.  
Մինն էլ ես կըտամ իմ լաւիկ պապին.  
Զէ, չէ, մի մերժիր, պապի ջան, վեր առ.  
Ես ուզում էի քեզ երկուսը տալ,  
Բայց...բայց, պապի ջան,  
Տակը մընացած այն սի հատիկը  
Զէ ինձ է արժան:



Թ. \*)

83. Մարդու մարմնի անդամները՝ գլուխ, պարանոց (վիզ), բուն, ձեռներ, ոտներ:

84. Գլխի մասերը՝ գագաթ, ծոծրակ, քունք,

ձակատ, դէմք:

85. Դէմքի մասերը՝ յօնքեր, աչքեր, քիթ, թշեր, բերան, ծնօտ:

86. Բնի մասերը՝ կուրծք, փոր, կողեր, թիկունք, մէջք:

87. Կրտսնանեմ, կրտսնես, կրտսնէ. նա կրտսնէ:  
Կրտսնենք, կրտսնէք, կրտսնեն. նրանք կրտսնեն:  
Կ'իմանամ, կ'իմանաս, կ'իմանայ. նա կ'իմանայ:  
Կ'իմանանք, կ'իմանաք, կ'իմանան. նրանք կ'իմանան:  
Կրկարգամ... կ'ընդունեմ... կրմոռանամ... կ'ասեմ...

88. Հանելուկ՝ Չորս մայր կային նմանակ, ունէին հինգ հինգ գաւակ. հինգը մէկ մօր էին որդիք, հինգը նրանց եղբօր որդիք. տասն էլ հօրեղբօր որդիք:

\*) Ուսուցիչը բացատրում է ու եւ յ սաների սովորական գործածութիւնը՝ ու տառը գրւում է նաև երկու գրով, առանց կցւելու = ու է յ ձայնաւորը գրւում է նաև բաղաձայն յ տառի պէս, առանց սուղ նշանի:  
յ բաղաձայնը բառի մէջ պէտք է կարգաւ ըրպէս յ:  
յ բաղաձայնը միավանկ բառերի վերջում պէտք է կարգաւ ըրպէս յ, եթէ բառը գործողութիւն չէ ցոյց տալիս:

89. Աչքով տեսնում ենք առարկան, որոշում ենք նրա մեծութիւնն ու փոքրութիւնը:

90. Ականջով լսում ենք առարկայի ձայնը, որոշում ենք ձայնի ոյժը, քաղցրութիւնը:

91. Քիթով հոտոտում ենք, որոշում ենք առարկայի բուրմունքը, գարշութիւնը...

92. Լեզուով ճաշակում ենք, որոշում ենք առարկայի քաղցրութիւնը, դառնութիւնը...

93. Մատներով շօշափում ենք առարկան, որոշում ենք նրա պնդութիւնը, փափկութիւնը, սառնութիւնը, տաքութիւնը, կոշտութիւնը, կոկոնութիւնը...

94. Առածներ՝ Անուշ հոտը վարդից ուզիր, մարդութիւնը մարդից ուզիր: — Անհունար մարդու լեզուն երկար կըլինի: — Ուրիշի աչքը քեզ համար լոյս չի տալ:

### 95. Ո ս կ ի ն և եր կ ա թ ը

Ոսկին և երկաթը վիճում էին միմեանց հետ:  
«Ես ամենից լաւ մետալն եմ, ասում էր ոսկին. ամենքը գովում են ինձ, պատիւ են տալիս. ամենքը սիրում են ինձ. մարդկանց համար ես փող էլ եմ, զարդարանք էլ. ինձանից շինում են՝ սիրուն շղթաներ, թանկագին մանեակներ, մատանիք, քորոցներ... էհ, էլ ինչ երկարացնեմ. առանց ինձ մարդու կեանքը կեանք չէ, այլ տանջանք է: — Եթէ ուզենամ, ամբողջ աշխարհը մենակ կըգնեմ»:  
Երկաթն ասաց. «Շատ ես պարծենում, ոսկի աղայ, և իրաւունք էլ ունիս. մարդիկ քեզ շատ են երես տալիս: Բայց մենակ դու չես աշխարհի տէրը. երբ մարդս ուզում է ապամենակ դու չես աշխարհի տէրը. երբ մարդս ուզում է ապահով ապրել, նրան երկաթ է հարկաւոր. տուն շինելու համար ոսկէ կացնով չեն կտրում փայտը. հաց ունենալու համար ոսկէ

արօրով չեն վարում հողը. գազաններէց պաշտպանելու համար ոսկէ հրացան չեն բանեցնում: Թէև դու, աղա ջան, կարող ես աշխարհ գնել, բայց ես էլ, լաւ գիտենաս, կարող եմ բոլորը ձեռքիցդ խլել»:

96. Հանելուկներ՝ Ա. Երկու եղբայր խիստ որոնւած, երկուսն էլ մէկ մօրից ծնւած. մեծի փոքր է պատիւն ու գին, փոքրը յարգի ու թանկագին:

Բ. Կլորակ, դեղին, աշխարհի սիրելին:

### 97. Չորս ցանկութիւն

1. Չմեռն էր: Գետը ծածկւել էր սառուցով: Գարեգինը իւր ընկերների հետ խաղում և սղղում էր հաստ սառուցի վրայ: Բաւական խաղալուց յետոյ՝ նա ուրախ-ուրախ տուն վազեց և ասաց հօրը. «Ա՛խ, հայրիկ, ինչ պատուական եղանակ է ձմեռը՝ որքան ուրախութիւններ ենք անում մենք՝ ձնագնդի ենք խաղում, սղղում ենք սառուցի վրայ, սահնակներով զբօսնում ենք... Ա՛խ, ինչ կըլինէր, որ միշտ ձմեռ լինէր»: Հայրը հանեց ծոցի տետրակը և ասաց. «Գրի՛ր սրա մէջ քո ցանկութիւնը»: Գարեգինը գրեց:

2. Չմեռն անց կացաւ: Գարունը եկաւ: Բացւեցան ծառերի ծաղիկները. բարձրացան դաշտերի խոտերը. ամենայն տեղ ոստոստում էին հազարաւոր թիթեռներ ու բզէզներ: Գարեգինը դուրս գնաց դաշտը, ծաղիկներ քաղեց, թիթեռներ բռնեց. իսկ երբ երեկոյեան տուն եկաւ, ասաց հօրը. «Պէտք է իմանաս, հայրիկ, թէ որքան ուրախացայ ես այսօր. ճշմարիտ, շատ հիանալի եղանակ է գարունը և, եթէ ինձ մնար, ես կըրցանկանայի, որ միշտ գարուն լինէր»: Հայրը հանեց տետ-

րակը և առաջարկեց Գարեգինին, որ իւր ցանկութիւնը գրէ: Գարեգինը գրեց:

3. Ամառնացաւ: Դաշտերի խոտերը հասել էին և հնձող էին կանչում: Գարեգինն ու հայրը գնացին խոտ հնձելու: Քանի որ հայրը վեր էր տալիս անուշահոտ խոտը, Գարեգինը իւր զուարճութիւններն էր անում՝ ձուկն էր բռնում գետիցը, հատապտուղներ էր հաւաքում, գլորում էր հոտաւէտ խոտերի վրայ: Երեկոյեան, տուն յետ դառնալիս, նա ասաց հօրը. «Ահա այսօր ես անչափ ուրախացայ. երանի թէ ամառը վերջ չունենար»: Գարեգինի այս ցանկութիւնն էլ գրւեց տետրակի մէջ:

4. Վերջապէս եկաւ աշունը: Այգիներում լաւ-լաւ պտուղները հասել էին՝ խնձորը, տանձը, սալորը, սերկևիլը, խաղողը... Մարդիկ դուրս էին եկել այգեկութի: Գարեգինն էլ իր ծնողների հետ գնաց այգի և քաղն սկսեցին: Պէտք էր տեսնել, թէ ինչպէս էր վազվզում նա մէկ ծառի տակից դէպի միւսը, ծիծաղում, երգում, խաղում և հատապտուղները բերանը զցելով՝ անուշ անում: Վերջը նա վազեց հօր մօտ, փաթաթեց նրա պարանոցով և ասաց. «Հայրիկ, աշունը տարուայ ամենալաւ պարանոցով և ասաց. «Հայրիկ, աշունը տարուայ ամենալաւ եղանակն է»: Այն ժամանակ հայրը հանեց փոքրիկ տետրակը և ցոյց տրւեց, որ նա գարնան, ձմեռուան և ամառուան համար էլ միևնոյն բանն է ասել:

### 98. Ուլերն ու գայլը

Լինում է-չի լինում մի այժ: Այս այժը անտառում իրան համար տուն է շինում և իր զաւակների-փոքրիկ ուլերի հետ բնակւում է նրա մէջ: Ամեն առաւօտ մայրը դուրս է գնում արածելու: Գնալուց առաջ նա ասում է իր ձագերին. «Ո՛րդիք, դուները փակեցէք, հանգիստ կացէք և, եթէ գրսից մարդ գալու

լինի, դուռը բաց չանէք»: Ասում է ու գնում: Դաշտումը լաւ արածելուց, կուրծը կաթնով ցնեւուց յետոյ, այծը տուն է գալիս: Տան դռները փակ են: Նա պողերով դուռը ծեծում է ու կանչում:

«Չալիկ-մալիկ ուլիկներ,  
Չալ-պըտուրիկ այծիկներ,  
Ելէք, բացէք տան դուռը.  
Պատրաստ է ձեր ապուրը»:

Ուլերը բաց են անում դուռը: Մայրը ծիծ է տալիս նրանց և կրկին գնում է արածելու:

Այս ամենը տեսնում ու լսում է գայլը: Նա մտքումը դնում է, որ խաբելով ներս մտնէ ուլերի փարախը, երբ մայրն այնտեղ չլինի: Մի օր, երբ այծը դուրսն է լինում, գայլը կամաց-կամաց գալիս է, թաթովը դռանը խփում է ու կանչում:

«Չալիկ-մալիկ ուլիկներ,  
Չալ-պըտուրիկ այծիկներ,  
Ելէք, բացէք տան դուռը.  
Պատրաստ է ձեր ապուրը»:

Ուլերն ականջ են դնում. նրանք հասկանում են, որ դուռը ծեծողը իրանց մայրը չէ և պատասխանում են. «Դու մեր մայրը չես, կորիք, հեռացիր այդ տեղից. մեր մայրը բարակ ձայն ունի և քաղցր է մկկում, դուռն էլ պողերով է ծեծում»: Ասում են ու դուռը բաց չեն անում: Գայլը թողում, հեռանում է: Փոքր ժամանակից յետոյ գալիս է մայրը. նա գովում է ուլերին, որ դուռը բաց չեն արել:—«Դուք շատ լաւ էք արել, սրբիք, որ դուռը բաց չէք արել, թէ չէ՝ նա ձեզ ամենիդ էլ կ'ուտէր»:

99. Կ Ի Ս Լ Ա Ն Ջ Ը

Լինում է—չի լինում մի աղքատ պառաւ: Այս պառաւն ունենում է երեք տղայ, որոնցից երկուսը առողջ են լինում, երրորդը պակասաւոր: Մի երեկոյ պառաւն ասում է իւր որդոցը. սրբիք, տանը նստելով բան չի դառնալ. տղամարդ էք, վեր կացէք, գործի գնացէք: Եղբայրները նստում են խորհրդի:

«Լսե՛լ ես, սպեր, ասում է միջնեկ եղբայրը. մեզանից շատ հեռու, մի անտառի մէջ, ասում են, մի վիշապ կայ... հարնուտ, շատ հարուտ. արի-գնանք, սպանենք, փողերը վեր առնենք»:

—Լաւ, ասում է մեծ եղբայրը. ինչ կըլինի-որ, գնանք...

Փոքր եղբայրը խնդրում է, որ իրան էլ հետները տանեն:

—Ո՞նց չէ, հէնց դու էիր պակաս. տանենք թէ չէ, ծովին թրով կըտաս. չէ, տղաս, դու նանի մօտ կաց, տունը պահպանիր, մինչև մենք գնանք, տեսնենք՝ ինչ ենք անում»: Ասում են ու ճանապարհ ընկնում:

Գնում են—գնում, շատն ու քիչն Աստուած գիտէ, հասնում են մի աղբիւրի: Այս աղբիւրի մօտից ճանապարհը բաժանւում էր երկուսի: Եղբայրները չեն իմանում, թէ որ ճանապարհով գնան. վերջը վճռում են, որ մէկը մի ճանապարհով գնայ, միւսը—միւս:—Գնում են:

Շատ է գնում մեծ եղբայրը թէ քիչ, պատահում է մի հովիւ:  
«Բարի-աջողում»:

—Աստուծու բարին:

«Հովիւ եղբայր, այս ճանապարհը բռնած որ գնամ, վիշապի բնակարանին չեմ հասնիլ»:

—Կըհասնես. բայց ի՞նչ ունիս դու այն մարդակերի մօտ:

«Գնում եմ՝ սպանեմ, փողն ու հարստութիւնը վեր առնեմ:

Հովիւը գլուխը շարժում է և ասում. «Ահա մի մահկանացու իւր գլխից ձեռք վեր առած, դատարկ յոյսերից խաբւած, կամենում է զոհ լինել մեծ վիշապին մարդակեր»:



«Ի՞նչ ես փրնթփրնթում, այ մարդ. մի՞թէ կարծում ես, թէ չեմ կարող վիշապին սպանել»:

—Փորձենք, ասում է հովիւը: Նա վերցնում է մի կովկիթ կաթը, բերում, դնում է օտարականի առաջ և ասում է. «Տես, եղբայր. ահա ես կրհեծնեմ սև այծը, կըպտտեմ հօտիս շուրջը. եթէ մինչև իմ գալը կաթնաբերօջը կերած-պրծած եղար, վիշապին կըյաղթես, թէ չէ՝—չես յաղթիլ»:

«Շատ բարի», ասում է օտարականը, և ծանր ու բարակ նստում է կովկիթի կողքին:

Հովիւը վերադառնում—տեսնում է, որ կաթնաբերօջի կէսն էլ չի կերած: Նա գլուխը շարժում է և ասում. «Արի, եղբայր, մի անիր, փորձեա՛ծ հովւիս ականջ դիր, յետ դառ, գլուխդ ազատիր»:

Օտարականը բանի տեղ չի դնում հովւի խրատը և շարունակում է ճանապարհը: Գնում է-գնում, շատն ու քիչն Աստուած գիտէ, պատահում է մի ուղտապանի:

«Բարի-աջողում քեզ»:

—Այ Աստուծո՛ւ բարին քեզ: Ո՞վ ես. ի՞նչ մարդ ես. ո՞ւր ես գնում:

«Օտարական եմ. հեռու աշխարհից եմ գալիս. գնում եմ այսինչ վիշապին սպանեմ, փողն ու հարստութիւնը վեր առնեմ»:

—Հանաք ես անում:

«Ձէ, ուղղորդ եմ ասում»:

—Բա՛... դէ որ այդպէս քաջ մարդ ես, արի ոյժդ փորձիր այս ուղտի վրայ, ասում է ուղտապանը, և մի ուղտ քաշում—կանգնեցնում է նրա առաջ. եթէ փչելով այս ուղտին վեր պցեցիր, վիշապին կըյաղթես, ասում է:

Պառաւի տղան փչում է-փչում... ուղտը տեղիցն էլ չէ շարժում: Այն ժամանակ բարի ուղտապանը ասում է. «Արի, եղբայր, մի անիր, ուղտապանիս ականջ դիր, յետ դառ, գլուխդ ազատիր»:

Ականջ չի դնում օտարականը բարի ուղտապանի խորհրդին և առաջ է գնում: Գնում է-գնում, շատն ու քիչն Աստուած

գիտէ, հասնում է վիշապի բնակարանին: Իռան ձեղքից նայում-տեսնում է, որ վիշապը, օջաղի կողքին նստած, մի չարխի պղինձ առաջը դրած, ճաշ է ուտում: Պառաւի տղան կանչում է:

«Վիշապ-վիշապ, դ՞ուրս արի, միմեանց հետ կռիւ անենք, Բաց ու արձակ սրահում զօր զօրի տանք, կռիւ բռնենք»:

Վիշապը ներսից պատասխանում է.

«Օտար եղբայր, քո ձայնից իմ սիրտըս կարատում է, Բոլոր մարմինս երկիւղից, ոտն ու ձեռս դողում է.

Աղաչում եմ, ինձ խրղճա՛, մի ըսպանիր չարաչար.

Մտիր, իմ բոլոր տունըս քեզ մատաղ է, վեր առ, տար»:

Ճանապարհորդը խաբւում է և ծանր ու բարակ ներս է մտնում վիշապի սենեակը: Վիշապը բռնում է նրա վզակոթից և, բաց անելով ներքնատան դուռը, ցած է գլորում. «Գնա՛, ասում է, երգիր այդտեղ մի քիչ ժամանակ. ես դեռ ևս մի բանի օրուայ պաշար ունիմ ուտելու»:

Միւս առաւօտ վիշապը լսում է, որ մի ուրիշ մարդ դուռը ծեծում է և ասում.

«Վիշապ-վիշապ, դ՞ուրս արի, միմեանց հետ կռիւ անենք, Բաց ու արձակ սրահում զօր զօրի տանք, կռիւ բռնենք»:

Սա ինչ բաղդաւորութիւն է, մտածում է վիշապը. մարդիկ իրանք-իրանց իմ դուռն են գալիս. ասում է ու ներսից պատասխանում.

«Օտարական, քո ձայնից իմ սիրտս կըտրատում է, Բոլոր մարմինս երկիւղից, ոտն ու ձեռս դողում է.

Աղաչում եմ, ինձ խրղճա՛, մի ըսպանիր չարաչար.

Մտիր, իմ բոլոր տունս քեզ մատաղ է, վեր առ, տար»:

Անծանօթը հպարտ-հպարտ ներս է մտնում: Վիշապը գլուխում է նրան իւր եղբօր մօտ:

Անցաւ մի քանի ժամանակ. մեր հովի մօտ եկաւ մի մարդ, մի զարմանալի կիսլանջ մարդ:

«Բարի օր, ապէր», ասեց Կիսլանջը:

— Բարի օր, որդի, պատասխանեց հովիւը:

«Ապէր, հարցնիրն ամօթ չընի, սրանից մի քանի օր առաջ այս ճանապարհով այսպէս ու այսպէս մարդիկ անց չէն կացել»:

— Անց են կացել, որդի, անց չէ, անց են կացել. ինչքան ասացի, ինչքան խրատեցի, որ չըզնան. ականջ չարին, գնացին... էհ, ջահելութիւն, ջահելութիւն... հիմի նրանք վիշապի փորումը կըլինեն:

«Այդ գնացողները եղբայրներս էին, մեծը և միջնեկը. ես գնում եմ, որ նրանց վրէժն առնեմ», ասաց Կիսլանջը:

Ծերունի հովիւը նայեց մի կռնանի, կէս մէջքանի մարդուն և մտածեց. «Ինք չկայ թիզ ու կէս, արարմունքը գազ ու կէս», սրա նման մարդկանց համար է ասած: Բայց էլի ուզեց փորձել. կաթնով լցրեց կովկիթը, բրդեց, դրեց Կիսլանջի առաջը և ասաց. «Տես, որդի, եղբայրներիդ պէս պարծենկոտ մի լինիր. անհա ես կըհեծնեմ սև այծը, կըպտտեմ հօտիս շուրջը. եթէ մինչև իմ գալը չկարողանաս բոլոր կաթնաբրդօշն ուտել, լաւ է՝ յետ դառնաս, ձեր տունը գնաս»:

«Համաձայն եմ», պատասխանեց Կիսլանջը:

Հովիւը քշեց — գնաց: Երբ յետ եկաւ, տեսաւ, որ Կիսլանջը կովկիթը լպստում է: Բարի հովիւը զարմացաւ և երգեց.

«Յիսուն տարի հովիւ եմ, շատ մարդիկ եմ ես տեսել, Շատերին հէնց այս փորձով ես ճանապարհ եմ գցել. Բայց այսպիսի մի զարմանք ոչ տեսել եմ, ոչ լսել: Գնահ, որդի, համարձակ, Աստուած քեզ հետ, կարող ես, Չար վիշապին սպանել, փողն ու գանձը վեր առնել»:

Կիսլանջն առաջ գնաց և պատահեց հովիւին: Հովիւը բերեց մի խոշոր ուղտ, կանգնեցրեց նրա առաջ և յայտնեց իւր պայմանը: Կիսլանջը փչեց: Ուղտը յետ ու յետ գնաց և վայր ընկաւ: Ուղտապանը զարմացաւ և ասաց.

«Շատ տարի է ուղտապան, շատ մարդիկ եմ ես տեսել, Շատ մարդկանց հէնց այս փորձով ես ճանապարհ եմ գցել, Բայց այսպիսի մի զարմանք ոչ տեսել եմ, ոչ լսել: Գնահ, եղբայր, համարձակ, Աստուած քեզ հետ, կարող ես Չար վիշապին սպանել, փողն ու գանձը վեր առնել»:

Գնաց Կիսլանջը, վիշապի տուն հասաւ, դուռը ծեծեց և կանչեց.

«Կատաղի գազան, վիշապ մարդակեր, Հերիք գործեցիր պէսպէս չարիքներ. Հասել է ժամը, դու պիտի մեռնես. Ուրեմըն դուրս եկ, կուենք դու և ես»:

Վիշապը զարմացաւ. սա մի անփորձ լակոտ կըլինի, որ համարձակոււմ է այդ լեզուով խօսել հետս, մտածեց նա և ներսից ձայն տւեց.

«Ո՛վ ես դու, տէր իմ, մարդ ես թէ վիշապ, Չայնրդ է հօր, խօսքերըդ սարսափ. Բայց ով էլ լինիս, պատրաստ եմ անհ, Ներս եկ, հրամայիր. դու տէր, ես ծառայ»:

Կիսլանջը պատասխանեց.

«Սարգաթ ձևերով շատ մարդ ես խաբել, Շատին ներս տարել, խեղդել ու լափել. Բայց ինձ չես խաբել. դու պիտի դուրս գաս. Դու պիտի դուրս գաս, քեզ անեմ մաս-մաս»:

Կատաղեց վիշապը, ուժգին մոնչաց. սար ու ձոր թնդացին նրա ձայնից: Որպէս մի մսէ բլուր՝ նա շարժեց տեղից. բայց իւր անագին գլուխը դուրս հանելուն պէս, Կիսլանջի թուրը պսպղաց. վիշապի գլուխը երկու տապակ եղաւ:

Կիսլանջը մտաւ վիշապի կացարանը, ազատեց եղբայրներին. նրանց հետ միասին պտտեց բոլոր սենեակները. ման եկան, վիշապի խազնահորը գտան: Հորը խոր էր: Կիսլանջի

կոնատակերից թոկ կապեցին և ցած իջեցրին: Հորի սէջ ան-  
թիւ բարիք կար: Կիսլանջը առաջ մեծ եղբօր պարկը լցրեց,  
դուրս քաշել տւեց, յետոյ—սիջնեկինը, վերջը—իրանը: Երբ  
որ ոսկով լիքը պարկերը դուրս էին հանած, Կիսլանջը կանչեց,  
որ թոկը ցած թողեն, իրան էլ դուրս քաշեն. կանչեց Կիսլանջը,  
ձայն տւեց... պատասխան չկայ, մարդ չկայ:—Եղբայրները  
թողել էին նրան հորի մէջ և իրանք գնացել:

Քայց Կիսլանջը հորի մէջը չմեռաւ. հորի պատերի վրայ  
նա դաշոյնով ոտնատեղեր շինեց և դուրս եկաւ. յետոյ շալա-  
կեց պարկը և շտապեց, որ եղբայրներին համար: Գնաց, տեսաւ,  
որ նրանք մի ծառի տակ պառկել-քնել են. կամաց-կամաց մօ-  
տեցաւ, վեր առաւ նրանց պարկերը, տարաւ, թափեց միջի  
ոսկին մի ապահով տեղ, մանր խճաքարով լցրեց պարկերը,  
բերեց, էլի իրանց առաջուայ տեղը դրեց: Եղբայրները զար-  
թեցին, վեր առան պարկերը և ճանապարհ ընկան: Երբ որ  
տուն հասան, դուռը ծեծեցին և ասացին.

«Մայրիկ-մայրիկ, դուռը բաց,  
Վիշապին ըսպանեցինք,  
Նըրա գանձը շալակած  
Պարկերով այստեղ բերինք...»

Պառաւր փողի ձայնը որ լսեց, ուրախ-ուրախ դուրս վա-  
զեց, գաւակներին համբուրեց, յետոյ շտապով մեծ տաշար բե-  
րեց և ի՞նչ դատարկեց.—խի՛ճ: Եղբայրները փայտի պէս սառած  
մնացին: Սյդ ըոպէին Կիսլանջը հերթից ձայն տրւեց.

«Մայր, հաւատա՛ իմ խօսքին, սուտ են ասում երկուսն էլ.  
Ես եմ մորթել վիշապին. դըրանց ես եմ ազատել.  
Դըրանց արած գործերը քեզ կը պատմեմ մի առ մի.  
Դու եկ, դուռը բաց արա՛, վեր առ պարկըս ոսկով լի»:

Յետոյ Կիսլանջը պատմեց մօրը ամեն բան. բայց էլի  
խնդրեց, որ եղբայրներին ների և տանից դուրս չանի:—Մայրը  
համբուրեց բարի Կիսլանջին և նրա համար ձուածեղ արեց:

100. Հ Ա Յ Ր Մ Ե Ր

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն  
Քո. եկեսցէ արքայութիւն Քո. եղիցին կամք Քո  
որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ  
տո՛ւր մեզ այսօր. թո՛ղ մեզ զպարտիւս մեր, որպէս և  
մեք թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր  
զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ, զի  
Քո է արքայութիւն և՛ զօրութիւն և՛ փառք այժմ և  
յաւիտեանս:

Մեր Հայր, որ երկնքումս ես, սուրբ լինի Քո անունը.  
գայ Քո թագաւորութիւնը. լինի քո կամքը երկրի վրայ, ինչ-  
պէս երկնքումս է. մեր ամենօրուայ հացը այսօր էլ տուր մեզ.  
ներիր մեր պարտքերը, ինչպէս որ մենք ներում ենք մեր պար-  
տապաններինը. մեզ դէպի փորձանք մի տանիր, այլ փրկիր մեզ  
չարից, որովհետև Քոնն է թագաւորութիւնն էլ, զօրութիւնն  
էլ, փառքն էլ այժմ և յաւիտեանս:





|| A P H  
|| 3-3

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԵՐ-ԳԼԵԻՈՆԳԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ, առաջին տարի, այբբենարան և սկզբնական ընթերցարան, բազմաթիւ ընտիր պատկերներով և զրուկեան օրինակներով. 34-դ տպագրուածիւն. գինն է. . . . . 20 կ.
2. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ, երկրորդ տարի, երկրորդ գիրք ընթերցանութեան այբուբենից յետոյ, 23-դ տիպ, բարեփոխած և լրացրած. գինն է. . . . . 30 »
3. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ, երրորդ տարի. երրորդ տարուայ ուսուցման նիւթը ազգային ուսումնարանների համար, ուղղագրական և քերականական գիտելիքներով, 16-դ ճոխացրած տպագրուածիւն. գինն է. . . . . 50 »
4. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ, չորրորդ տարի. չորրորդ տարուայ ուսուցման նիւթը ազգային ուսումնարանների համար. 12-դ փոփոխած և լրացրած տպագրուածիւն. գինն է. . . . . 55 »
5. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ քերականութեան տարերքը, ընդարձակ յառաջարանով. գինն է. . . . . 50 »
6. ՀԱՅՈՐԴԻՒ Սրբազան պատմութիւն Հին-Կտակարանի. գինն է. 50 »
7. ՀԱՅՈՐԴԻՒ Սրբազան պատմութիւն Նոր-Կտակարանի. գինն է. 50 »
8. ՀԷՆԶԷԼԻՒ բանաւոր և զրաւոր հաշուելու խնդիրներ Ա. և Բ. տարի, գինն է. . . . . 35 »
9. ՀԷՆԶԷԼԻՒ նոյնը, երրորդ տարի. գինն է. . . . . 50 »

«Մայրենի Լեզու»-ի բոլոր մասերը քոյրստուած են պատշաճաւոր իշխանութեան կողմից որպէս ձեռնարկ՝ Հայերէն լեզուն դասաւանդելու ժամանակ:

Հասցէս՝ Тифлисъ. Николаю Исааковичу Теръ-Гевондянчу.

<< Ազգային գրադարան



NL0243545

9822